Ազգ
Azg
21 ՄԱՅԻՍ 2011 ՇԱԲԱԹ 92(4711)
ISSN: 1829-1651

# Նախագահ Սարգսյանը դիմեց Ազգային ժողովին՝ համաներում հայտարարելու առաջարկով

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 90-րդ հոդվածը՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը դիմել է ՀՀ Ազգային ժողովին՝ Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու առաջարկությամբ: Երեկ Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովը քննարկել է Սերժ Սարգսյանի առաջարկը համաներման մասին եւ դրական եզրակացություն է տվել՝ նախագծի հետ կապված առաջարկներ ներկայացնելով արդարադատության նախարարին: Ըստ ԱԺ պետաիրավական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի՝ արդեն հաջորդ շաբաթ, հերթական քառօրյայում Ազգային ժողովը կքննարկի համաներման նախագիծը: Քննարկումը եւ համաներման նախագծի տեքստը առայժմ գաղտնի են:

**Ս. Խ.**

# Կանխատեսելի խաղեր



**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայաստանում բավական կանխատեսելի իրավիճակ է ստեղծվել: Այն պահից, երբ Տեր-Պետրոսյանը երեք պահանջից սկսեց խոսել, հաջորդեց նախագահ Սարգսյանի հանձնարարականը մարտի 1-ի հետաքննությանը նոր թափ հաղորդելու մասին, հետո մարտի 1-ի գործով ձերբակալվածներից ազատ արձակվածներ եղան, հետո նորից ՀԱԿ-ականները սկսեցին իրենց եթե-ապան: Այս բոլորը, այսինքն՝ իշխանություն-ՀԱԿ գործողությունները այնքան սինքրոն են ընթանում, որ անգամ գործընթացներից քիչ տեղյակ մարդանց համար են մեկին մեկ կանխատեսելի իշխանության եւ ՀԱԿ-ի հերթական քայլերը: Օրինակ՝ կանխատեսելի էր, որ այսօր-վաղը հերթական քայլը Հայաստանի նախագահինն էր, քանի որ ՀԱԿ-ականները, իբր իրենց նախապայմաններին հաստատակամ, պնդում էին, որ եթե Նիկոլն ու Սասունը մայիսի 31-ին հանրահավաքին չգան, իրենք ևսիմ ինչ են անելու: Բայց դա հավանաբար միայն ձեւաչափը պահելու համար է, որովհետեւ եթե երեկ նախագահ Սարգսյանը դիմել է Ազգային ժողովին՝ համաներում կիրառելու վերաբերյալ, ուրեմն նշանակում է, որ մի երկու շաբաթ է արդեն նախագահի այդպիսի դիմումի համար պատրաստված են եղել իրավական հիմքերը, համաներման ենթակաների շրջանակը, համաներման՝ ԱԺ ընդունելիք եւ նախագահի կողմից հաստատելիք ժամկետները, այնպես որ տեղեկացված շրջանակների համար (ՀԱԿ-ի վերնախավին չտեղեկացված անվանել չես կարող) այստեղ որեւէ անակնկալ չկար որ լիներ: Այդ դեպքում երեկ, դեռ մինչեւ նախագահ Սարգսյանի դիմումի հայտնի դառնալը ինչած ՀԱԿ-ական եթե-ապան անհասկանալի էր (թեկուզ Լ. Զուրաբյանի՝ ԵՄ եւ դեսպանների հանդիպմանը), եթե չասենք՝ թատերական է:

Իսկ իրականում ո՞րն է այս բոլորի հենքը, իրական շարժառիթը: Արդյո՞ք ոչ այն, երբ կողմերին միջազգային բեմերից ասվել է՝ խելոք մնացեք, ձեր ներքաղաքական տարաձայնությունները այս պահին մի կողմ դրեք, քանի որ ավելի մեծ խաղագումարների հարց է լուծվում, դե իսկ դուք էլ Ղարաբաղի հարց ունեք, որը նոց ուզենք, այնպես կձգենք: Նկատո՞ւմ եք, որ հիմա ամենատարբեր ատյաններից անընդհատ մարդ են վախեցնում պատերազմի հավանականության մասին: Համենայն դեպս՝ Քլինթոն-Նալբանդյան մեկ օր առաջվա հանդիպումը չի կարող այս բոլորին հուշիկ չիպվել, մանավանդ՝ Նալբանդյանը Նահանգներ մեկնեց ֆրանսիական օդը ընչած ու ֆրանսիական խորհուրդ խորինի ինչյունները դեռ ականջի մեջ, որոնք նույնպես չեն կարող ընդհանուր զարգացումների համապատկերից դուրս լինել, իսկ տիկին Քլինթոնի՝ քաղաքականությունից սկսվող եւ մինչեւ «անձնական հարաբերություններ եւ ավելին հասնող» կապերի, ու Ղարաբաղի հարցի լուծման վերաբերյալ ասածները այս բոլոր ենթատեքստերը պարունակում են:

Տես էջ 3

**ՎԱՇԻՆԳՏՈՆ**

# Կարգավորում բացառապես խաղաղ ճանապարհով



**Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորումը հնարավոր է բացառապես խաղաղ ճանապարհով: Հերթական անգամ նույն այս հայտարարությունը, հերթական անգամ ոչ թե կոնկրետ հասցեով, այլ ընդհանրական, հիշեցրել է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Մայիսի 19-ին Վաշինգտոնում Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպմանը Քլինթոնն ընդգծել է, որ ԱՄՆ-ն, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, շարունակելու է իր լիակատար աջակցությունը հակամարտության կողմերի միջեւ համաձայնությունների ձեռքբերմանը եւ հիմնախնդրի հանգուցալուծմանը:**

**Ըստ ԱԳՆ հաղորդագրության, պետքարտուղար Քլինթոնը, ողջունելով Հայաստանի արտգործնախարարին, նշել է, որ Միացյալ Նահանգներն ու Հայաստանը կապված են ամուր բարեկամությամբ ու գործընկերությամբ, եւ հարաբերությունները գնալով ավելի են ամրապնդվում եւ զարգանում: «Արտգործնախարար Նալբանդյանի հետ բազմաթիվ հանդիպումներ են կայացել եւ ես ուրախ եմ կրկին ողջունել նրան պետքարտուղարությունում: Միացյալ Նահանգների ու Հայաստանի միջեւ գոյություն ունեն այնպիսի բազմաբնույթ կապեր, որոնք սկսվում են քաղաքականությունից եւ հասնում մինչեւ անձնական հարաբերություններ եւ ավելին, ինչը մեզ համար շատ կարեւոր է: Մենք մեծ նշանակություն ունեցող հարցեր ենք քննարկելու, եւ ես ակնկալում եմ, որ մենք կշարունակենք մեր այդ կարեւոր երկխոսությունը»:**

**Նախարար Նալբանդյանն, իր հերթին, ասել է, որ հանդիպումների հաճախակիությունը վկայում է հայ-ամերիկյան հարաբերություններն առավել խորացնելու եւ ամրապնդելու կողմերի հանձնառության մասին:**

**Ա. Հ.**

# Շփման գծի միջադեպերը՝ նախագահների հանդիպումների ու համանախագահների այցերի արանքում

Հաջորդ ամիս՝ հունիսին տեղի է ունենալու Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպում: Այդ մասին ադրբեջանական լրատվամիջոցներին տեղեկացրել են սեփական արտգործնախարարությունից:

Նախորդ հանդիպումը տեղի ունեցավ մարտի 5-ին Սոչիում՝ կրկին Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնությամբ, որին անմիջապես նախորդել էր մարտի 4-ը, երբ ժամը 14:30-ի սահմաններում ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան ուղղությամբ Ադրբեջանի կողմից խախտվել էր հրադադարն, ու դրա հետեւանքով զոհվել էր հայ զինվոր: Եվ սա այն դեպքում, երբ հաջորդ օրը նախատեսված էր Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը Սոչիում՝ շարունակելու բանակցությունները:

Սոչիի հանդիպմանը, ըստ հաղորդագրությունների, քննարկվել էր այդ հանդիպմանը նախորդած՝ 2010թ. հոկտեմբերի 27-ի աստրախանյան հանդիպման հայտարարությունը՝ «Վստահության ամրապնդման հաստուկ արձանագրությունը», որ ամենից առաջ ընդգծում էր հրադադարի ռեժիմի ամրապնդման ու ռազմական ոլորտում փոխվստահության անհրաժեշտությունը: Մարտի 5-ի եռակողմ հանդիպմանն էլ հետեւեց փաստաթուղթ, որում նախ ամրագրվեց՝ «Ամենակարճ ժամկետում ավարտել ռազմագերիների փոխանակումը», ապա նաեւ՝ «Զգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով եւ կրակի դադարեցման գծի երկայնքով կողմերի մասնակցությամբ անցկացնել հնարավոր միջադեպերի հետաքննություն՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո եւ ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցչի աջակցությամբ»:

Թերեւս սա էլ պիտի լինի սպասվող հանդիպման օրակարգը, որը, սակայն, այդպես էլ հստակորեն չի ներառում կամ առնվազն այդուհետեւ հանրությանը չի ներկայացնում միջադեպերի հետաքննության արդյունքներն ու դրանց մեղավորներին: Հնարավոր է, որ շփման գծի միջադեպերն ու դրանց առնչությամբ անցկացված դիտարկումների արդյունքները քննարկման առարկա դառնան մինչեւ նախագահների մակարդակով հանդիպումը, քանի որ մինչ այդ սպասվում է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցելություն տարածաշրջան:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՌՀՄ-ի պահանջը՝ ուղղված Regnum գործակալությանը

**Ռուսաստանի հայերի միության ղեկավարությունը զարմանքով ընդունեց Regnum լրատվական գործակալության հայտարարությունը, թե Ռուսաստանի հայերի միությունը ծախսելու է 90 միլիոն դոլար Աբխազիայի ու Հարավային Օսիայի ճանաչման համար: Regnum-ի այս հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը: Մենք ստիպված ենք հիշեցնել Regnum-ի ղեկավարությանը, որ սա առաջին անգամը չէ, որ գործակալությունը տարածում է չստուգված եւ իրականությանը չհամապատասխանող հաղորդագրություններ, որոնցում հիշատակվում է Ռուսաստանի հայերի միությունը:**

**Պահանջում ենք հերքում տալ այս տարվա մայիսի 19-ին հրապարակված այս սխալ ինֆորմացիային, կարդում ենք ՌՀՄ հայտարարության մեջ:**

# Արտերկրի հայերն առանց վիզայի 180 օր կմնան Հայաստանում

ՀՀ կառավարությունը երեկ հավանության է արժանացրել «Օտարերկրացիների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու նախագիծը: Փոփոխության ընդունման դեպքում արտերկրի հայ քաղաքացիները, Հայաստան ժամանելու դեպքում, իրավունք կունենան 180 օրվա ընթացքում առանց մուտքի արտոնագրի մնալ մեր երկրի տարածքում:

# Ռադիոիզոտոպների արտադրություն Հայաստանում

«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ընկերությանը կառավարությունը երեկ որոշեց 50 մլն 600 հազար դրամ բյուջետային վարկ տրամադրել շենքի կառուցման համար: Միաժամանակ, Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի տարածքում կտեղադրվի պրոտոնային արագացուցիչ, որով սկիզբ կդրվի բժշկական նպատակով օգտագործվող ռադիոիզոտոպների արտադրությանը:

# Հայաստանը ներկայացավ Գերմանիայի տնտեսական կենտրոնում

**Համառոտ հենց այսպես կարելի է անվանել մայիսի 19-ին Գերմանիայի Կառլսռուհե քաղաքում կայացած տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ճարտարագիտական ոլորտի գերմանա-հայկական համաժողովը (Deusch-Armenische IT& Engineering Konferenz), որին ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ, երկու երկրների բարձր տեխնոլոգիաների, ճարտարագիտական ոլորտը ներկայացնող ընկերություններ ու ձեռնարկատերեր:**

**Համաժողովը կազմակերպել էին ՀՀ տնտեսության նախարարությունը, Կառլսռուհեի Առեւտրի եւ արդյունաբերության պալատը, «Քրոնիմեց Մայնինգ» բաժնետիրական ընկերությունը եւ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը:**

**Հայաստանյան երկու տասնյակից ավելի ընկերությունների ներկայացուցիչների համար Կառլսռուհեի Առեւտրի եւ արդյունաբերության պալատում անցկացված երեքժամյա անգլիալեզու համաժողովը հրաշալի առիթ էր նախ ներկայացնելու Հայաստանը՝ որպես ներդրումների համար գրավիչ, մեծ ու դեռեւս չյուրացված հնարավորություններով երկիր, որի օրենսդրական բարենորոգվող դաշտը նպաստավոր պայմաններ է ստեղծում այնտեղ գործարության զարգացման համար, ապա՝ փաստերով ներկայացնելու ոլորտում ունեցած իրենց հաջողությունները՝ համագործակցության հնարավոր նոր հասցեներ որոնելու հույսով:**

**Կառլսռուհեի տեխնոլոգիական տարածաշրջանը Եվրոպայի կենտրոնում գտնվող եվրոպական խոշոր տեխնոլոգիական կենտրոն է՝ համաշխարհային ճանաչում ունեցող մի շարք նորարար ընկերությունների եւ հետազոտական կենտրոնների համար վաղուց ճանաչելի ու վստահելի այցեքարտ: Բադեն-Վյուրթեմբերգ երկրամասը (մայրաքաղաքը՝ Շտուտգարտ), որտեղ գտնվում է Կառլսռուհեն, ոչ միայն ԳԴՀ ամենագեղեցիկ շրջաններից է, այլեւ երկրի ազդեցիկ, հզոր տնտեսական կենտրոնը: Միջազգային մամուլը ծանոթ է Կառլսռուհեին նաեւ այն պատճառով, որ այստեղից է լսվում ԳԴՀ «իրավական ձայնը»՝ Կառլսռուհեում են տեղակայված երկրի Սահմանադրական, Գերագույն դատարանները:**

**Մայիսի 19-ի համաժողովին նկատելի դարձավ, որ Գերմանիայի «գաղափարների դարբնոցի» համարում ունեցող Կառլսռուհեի տեխնոլոգիական տարածաշրջանին կարելի է վերագրել նաեւ հյուրընկալ հասկանիշը: Բայց սրա ու համաժողովում հնչած ելույթներին մեր հանգամանալից անդրադարձը՝ առաջիկայում:**

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
Կառլսռուհե, Գերմանիա

ԱԶԳ **Ընթացիկ**

# Ադրբեջանը մնում է «առատաձեռն»՝ Թբիլիսի-Կարս գծի համար վարկ տրամադրելու հարցում

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծային նախագիծը գնալով խնդրահարույց է դառնում վրաց-ադրբեջանական համագործակցության համար ոչ միայն ֆինանսական տեսանկյունից, այլեւ նախագծի կառավարման: Ամենից առաջ՝ Ադրբեջանն ու Վրաստանը պատրաստվում են համատեղ ձեռնարկություն հիմնել երկաթգծի շինարարության շրջանակներում:

Ադրբեջանի տրանսպորտի նախարարությունն, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, այս հարցը քննարկել է վրացական համապատասխան պատվիրակության հետ ու որոշել ստեղծել համատեղ մի կառույց՝ «բեռնափոխադրումների ռացիոնալացման, նախագծի շինարարության շրջանակներում աշխատանքների ինտենսիվացման եւ որակի բարձրացման նպատակով»:

Նախագծի շրջանակներում, «շինարարության որակի» խնդիրներից զատ, հայտնվել են նաեւ ֆինանսավորման տարբերակումներ: «**Ազգն**» արդեն տեղեկացրել էր նախագծի նախնական միջոցներին լրացուցիչ վարկեր ավելացնելու որոշման մասին: Ըստ այդմ, երկաթգծի վրացական հատվածի շինարարության եւ վերականգնման համար երկրորդ տրանշը տրամադրվել է 25 տարի ժամկետով եւ 575 մլն դոլար վարկի տեսքով, սակայն ոչ թե խորհրդանշական 1 տոկոսով, ինչպես առաջինը, այլ 5 տոկոս տարեկան տոկոսադրույքով:

Առաջին տրանշը կազմում էր միայն 200 մլն դոլար, ինչպիսի դրամագլուխ էլ ենթադրվում էր նաեւ երկրորդ փոխանցման համար, սակայն իրավիճակը փոխվել է: Նախագծի իրագործողները գումարի մեծացումը բացատրում են, թե նախագծի մեկնարկային 2007 թ.-ից հետո թանկացել են շինարարական նյութերն ու հումքը, վերագնահատվել է Թբիլիսի-Ախալքալաք երկաթուղու մի հատվածի՝ Մարաբդա-Կարծախ երկաթգծի վիճակը, ինչպես նաեւ աշխատանքն իրականացվում է «վատ եղանակային պայմաններում»:

Այս ամենից զատ, արդեն վրացական մամուլի տեղեկացմամբ, փոփոխություններ են տեղի ունեցել հենց երկաթգծի առնչությամբ, այսինքն՝ ուղին փոքր-ինչ փոփոխվել է: Այդ փոփոխությունը, որ նաեւ համարվում է նախագծի թանկացման պատճառ, վերաբերում է Ախալքալաքից Թուրքիա ընկած հատվածին՝ մոտ 25 կմ երկարությամբ: Երկրաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ այդ հատվածը սողանքներով տարածք է, ուստի պետք է կառուցվի շատ ավելի թանկ արժեցող 4 կմ-անոց թունել: Բացի դրանից՝ 160 կմ Մարաբդայից Ախալքալաք ընդգրկող գոյություն ունեցող երկաթգիծը ոչ թե կվերանորոգվի, այլ կկառուցվի նորից, քանի որ գրեթե անպետք է բեռնափոխադրումների համար:

Հիշեցնենք, որ Բաքու-Թբիլիսի-Կարս նախագիծը ներառում է Կարս-Ախալքալաք 98 կմ-անոց գծի շինարարությունը, որից վրացական հատվածը կազմում է մոտ 30 կմ:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Հույս, որ Հեֆֆերնը կբացատրի իր հայացքների տարբերությունը թուրքամետ նախկին շեֆի հայացքներից

«**Ազգն**» արդեն ներկայացրել է Ջոն Հեֆֆերնին Հայաստանում ԱՄՆ դեսպանի պաշտոնում առաջադրելու ԱՄՆ նախագահի մտադրության մասին: Ամերիկայի հայկական համագումարը եւս իր վերջին հայտարարությամբ անդրադարձել է այդ թեկնածությանը, հիշեցնելով Հեֆֆերնի՝ հակահայկական կեցվածք ունեցող եւ թուրքամետ գործունեություն ծավալած կոնգրեսական Բիրեյտրի օգնական լինելու հանգամանքը, ինչի մասին մեր թերթում արդեն հրապարակել ենք:

Ամերիկայի հայկական համագումարը նշել է, որ նախապես չի արտահայտվի Հեֆֆերնի թեկնածության առնչությամբ, մինչդեռ վերջինս դժվարություն կունենա, բայց պետք է բացատրի իր տեսակետների տարբերությունները թուրքամետ իր նախկին շեֆի հայացքներից: Համագումարը նաեւ հույս է հայտնել, որ Հեֆֆերնը կտա այդ բացատրությունները եւ կներկայացնի ամերիկյան տեսակետը ոչ միայն Հայոց ցեղասպանությունը եւ դրա հետեւանքները ճանաչելու անհրաժեշտության առումով, այլեւ զբաղվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի ագրեսիայի հարցով՝ տարածաշրջանում խաղաղություն ապահովելու նպատակով:

Հիշեցնենք, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Հայաստանում ԱՄՆ դեսպանի նոր թեկնածություն էր առաջ քաշել ի դեմս Ջոն Հեֆֆերնի: Ըստ Սպիտակ տան հաղորդագրության, Հեֆֆերնը ներկայումս զբաղեցնում է ՆԱՏՕ-ում ԱՄՆ առաքելության ղեկավարի տեղակալի պաշտոնը, իսկ մինչ այդ աշխատել է Ինդոնեզիայում ԱՄՆ դեսպանատանը:

**Ա. Հ.**

# Կարծես ուշացել են

**Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւը, որ «համատեղության կարգով» նաեւ ակադեմիկոս է, «Բակինսկի ռաբոչի» թերթում հրապարակել է ծավալուն հոդված, որտեղ փորձել է ներկայացնել Ադրբեջանի «ազգային գաղափարի մարմնացումը»:**

**Խորհրդային տարիներին մարքսիզմ-լենինիզմ դասավանդած եւ կոմունիստական կուսակցության ղեկավարության մեջ նկատելի տեղ զբաղեցրած պաշտոնյան, իհարկե, ոչինչ այլ բան չէր կարող ասել, քան փառաբանել Հեյդար եւ Իլհամ Ալիեւներին: Առաջինին՝ որպես «ազգային գաղափարի իրականացման սկզբնավորողի», երկրորդին՝ «իբրեւ այդ ուղեգծի շարունակողի եւ խորացնողի», ինչից տպավորություն է ստեղծվում, թե ադրբեջանական ժողովուրդն «ազգային գաղափար» չէր ունենա, եթե Ալիեւներն առհասարակ չծնվեին: Բայց դա չէ կարեւորը:**

**Ինչո՞ւ հատկապես այսօր է «փայլատակել» Ռամիզ Մեհթիեւի «քաղաքագիտական- վերլուծաբանական» միտքը: Այս հարցի պատասխանը գտնելու համար, կարծում ենք, շատ հեռու գնալ պետք չէ:**

**Աշխարհում տեղի են ունենում բուռն իրադարձություններ: Ինչ-որ տեղ կարելի է թերեւս ասել, որ «21-րդ դարը նոր է սկսվում»: Տեղի է ունենում, առնվազն՝ սկսված է արժեքների վերագնահատման գործընթաց: Եվ այս համապատկերում Ադրբեջանի՝ մեկ անձի «հանճարեղության եւ անփոխարինելիության» վրա կառուցված քաղաքական, պետական ու հասարակական համակարգը, անկախ այն բանից, թե հարեւան պետությունն իր բնական պաշարներով եւ աշխարհաքաղաքական դիրքով ինչ հետաքրքրություն է ներկայացնում աշխարհի համար, պարզապես չի տեղավորվում ճիշտ այնպես, ինչպես՝ Մերձավոր Արեւելքի ավտորիտար ռեժիմները:**

**Ավելին, Ադրբեջանում կարծես թե կանխազգում են, որ կարող են դառնալ էներգակիրների արդյունահանման եւ տարանցման պարզ օբյեկտ՝ զրկվելով տարածաշրջանային եւ համաշխարհային զարգացումներում անգամ ամենաչնչին իսկ դերակատարությունից:**

**Երեւի թե պատահական չէ, որ Ռամիզ Մեհթիեւի «քաղաքագիտական ուսումնասիրությունը» հրապարակ է գալիս այն բանից հետո, երբ Բաքվում Միացյալ Նահանգների դեսպանը գրեթե բացահայտեց, թե ինչ է ակնկալում Արեւմուտքն Ադրբեջանից, այն է՝ «միջանկյալ դիրք ավտորիտարիզմի եւ իսլամական արմատականության միջեւ»:**

**Պարզ ասած, դա նշանակում է, որ ներկայիս Ադրբեջանն ավտորիտար է, իսկ քաղաքական բարեփոխումների հետաձգումը՝ հղի իսլամական արմատականության քաղաքականացման վտանգով, եւ Արեւմուտքին ոչ առաջինն է ձեռնտու, ոչ էլ, բնականաբար, երկրորդը:**

**Ռամիզ Մեհթիեւն, ահա, «լիկբեզ» է անցկացնում արեւմտյան աշխարհի համար՝ բացատրելով, որ ադրբեջանական դրոշի եռագույնն ունի «թուրքականության, իսլամականության եւ եվրոպականության խորհուրդներ»: Իսկ դա նշանակում է, որ, ըստ նրա, Ադրբեջանի «ազգային գաղափարը թուրքական ինքնությունն է, իսլամականությունը՝ որպես հոգեւոր արժեք, եւ եվրոպականությունն՝ իբրեւ հեռանկար»:**

**Մեհթիեւը զանազան մտավարժանքներով ձգտում է «ապացուցել», որ երեք արժեքները «լիովին համատեղելի են, եթե ներկա քաղաքական համակարգը, որ ընտրել է «ազգային ինքնությանը յուրահատուկ դեմոկրատական առաջնահերթություններ», պահպանվի»: Եվ, ընդհակառակը, «բարեփոխումների արագացման ամեն մի փորձ կարող է խաթարել հասարակական համերաշխությունը»՝ դրանից բխող «վտանգներով հանդերձ»:**

**«Քաղաքագիտական վերլուծությունն», այսպիսով, ստեղծված իրավիճակի հետ հաշտվելու վերաբերյալ Արեւմուտքին հասցեագրված հորդոր է: Ինչ-որ տեղ՝ զգուշացում, ինչն, առհասարակ, ադրբեջանական «էլիտա»-ի համար վերջին շրջանում դարձել է «երկխոսության» պարտադիր տարր:**

**Չփորձելով գուշակել Մեհթիեւի «հայեցակարգի» նկատմամբ արեւմտյան շրջանակների վերաբերմունքը, կարելի է ենթադրել, որ Ադրբեջանն այդ կերպ փորձում է ներհասարակական բանավեճին հաղորդել աշխարհաքաղաքական ընդգծելի նշանակություն՝ հուսալով, որ իրեն «ճիշտ կհասկանան»:**

**Այնուամենայնիվ, թվում է, որ դրա համար ընձեռնված ժամանակն ադրբեջանական կառավարող վերնախավը բաց է թողել: Ընդգրկված լինելով հանդերձ տարածաշրջանային տնտեսական եւ կոմունիկացիոն նախագծերում, Ադրբեջանն անհուսալիորեն հետ է մնացել միջազգային քաղաքականության արդի օրակարգից:**

**Թերեւս նաեւ դրանով կարելի է բացատրել մարտաշունչ հռետորաբանության աննախադեպ աճն այդ երկրում. պատերազմ սանձազերծելու սպառնալիքով Ադրբեջանը հետապնդում է քաղաքական համակարգի «անսասանության հետ Արեւմուտքին հաշտեցնելու» նպատակ: Ինչպիսի՞ն կլինի արձագանքը՝ ենթադրությունների տրվել, ըստ երեւույթին, չարժե:**

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

*ԾՈՎԱՐՇԱՎ*

# Անիտա Կարագոշյան. ծովագնաց, օվկիանոսագետ



**2005 թվականին, նախապատրաստվելով «Կիլիկիա»-ի յոթ ծովերով Եվրոպայի շուրջը նավարկության երկրորդ փուլին, ես իմ տետրում գրի առա բոլոր կղզիներն ու հրվանդանները, որոնք պետք է հանդիպեին մեր երթագծում: Իմանալով, որ Ատլանտյան օվկիանոսի Բիսկայան ծոցը հյուսիսային քառասնական լայնություններում իր լիակատար «դռնբացության» եւ անչափելի խորության պատճառով (Արարատն իր բարձրությամբ կարող է տեղավորվել այնտեղ) համարվում է նավարկության համար ամենավտանգավոր հատվածներից մեկը, ես բլոկնոտում նշեցի բոլոր կղզիները, որոնք գտնվում են ծոցի կոր ափեզրերին: Ափսոս մնաց ձկան նմանվող կղզին՝ Օլերոն գեղեցիկ անվամբ: Ընդհանրապես ես պաշտում եմ կղզիները: Երբեք չեմ մոռանա իմ առաջին կղզին: Գոտլանդ: Բալթիկ ծով: Կրոնշտադտ նավահանգստում «Օկտյաբրսկայա ռեւոլյուցիա» ահռելի ռազմական գծանավի բարձր տախտակամածից ծով իջեցրին վեցթիանի նավակը, որով մենք լողացինք Գոտլանդ կղզի, որպեսզի մի քանի պարկ ալյուրի նմանվող ծովափնյա առանձնահատուկ ավազ բերեինք: Դա նավի վրա անհրաժեշտ էր տախտակամածը, միջին մասի բարձր հարթակները մաքրելու, հղկելու համար: Եվ էլի մի բան. եթե հաշվի առնենք, որ աշխարհագրություն գիտության համաձայն կղզի է կոչվում ցամաքի այն հատվածը, որը բոլոր կողմերից շրջապատված է օվկիանոսների, ծովերի, լճերի եւ գետերի ջրերով, ապա «Կիլիկիա»-ի նավապետ Կարեն Բալայանի գլխավորությամբ իսկական աշխարհագրական հայտնագործություն կատարեցինք, պարզելով, որ Արեւմտյան Եվրոպան միաժամանակ նաեւ կղզի է: Համենայն դեպս, լեգենդար «Կիլիկիա»-ն, մեկնարկելով Սեւ ծովից, անցնելով վեց ծովեր եւ Ատլանտյան օվկիանոսի մի հսկայական հատված՝ իր հավերժ կատաղի Բիսկայան ծոցով, նորից վերադարձավ Սեւ ծովի իր մեկնարկի կետը: Ինձ թվում է, այսօր արժե հիշեցնել, թե դա գործնականում ինչպես կատարվեց: Ահա «Կիլիկիա»-ի այն ֆանտաստիկ երթուղին. Սեւանա լճից քարշակով՝ մինչեւ Երեւան, Թբիլիսի, Սեւ ծով, հետո Մարմարի եւ Միջերկրական ծովեր, Ջիբրալթարի նեղուցով՝ Ատլանտիկա եւ դեպի հյուսիս՝ խելահեղ Բիսկայան ծոցով, ապա Լա-Մանշ նեղուցով՝ Հյուսիսային ծով, Բալթիկ ծովի Ֆիննական ծովածոց, այդտեղից էլ՝ Նեւայի գետաբերան: Ապա յոթ հարյուր կիլոմետր լողացինք Նեւայով, հասնելով Լադոգա լիճ, որից մտանք Սվիր գետը, Օնեժսկի ջրանցքով՝ Վիտեգրա գետ, Մարիինյան ջրանցք, Կովժա գետ, Ռիբինսկի ջրամբար, որն արդեն ինքը՝ Վոլգան է: Դժվար չէ քարտեզին նայելով որոշել, որ դրանից հետո Վոլգայով հասանք մինչեւ Վոլգա-Դոն ջրանցք եւ Դոնով վերջին՝ Ազովի ծով, որը Կերչի նեղուցով միանում է Սեւ ծովին: Ի դեպ, այս բոլոր աշխարհագրական անուններն ինձ ցավի չափ ծանոթ են: Քառասունչորս տարի առաջ Կամչատկայի իմ ընկերներ Անատոլի Գավրիլինի եւ Անատոլի Սալնիկովի հետ «Վուլկան» եւ «Հեյզեր» փոքրիկ, ինքնաշեն նավակներով անցանք այդ ճամփան (միայն հակառակ ուղղությամբ), ինչի մասին պատմել եմ իմ «Երկնագույն ճանապարհներ» գրքում: Այնպես որ, եթե կղզին ողողվում է նաեւ գետերով, ապա նշանակում է, որ Եվրոպան իրոք կղզի է, որի շուրջ մարդկության ողջ պատմության ընթացքում պտտվել է միայն «Կիլիկիա» նավը: Դա փաստ է:**

**Բոլորովին էլ պատահական չէր, որ այս ռեպորտաժն սկսեցի կղզիների հանդեպ իմ սիրուց եւ թուլությունից: Ես դրանց իմ հավաքածուն ունեմ: Պատահական չէ եւ այն, որ հիշեցի Օլերոն գեղեցիկ անունով կղզին, որն ավաղ, այն ժամանակ մեր ճանապարհից դուրս թողեցինք, քանզի «Կիլիկիա»-ն Բիսկայան ծոց մտավ ոչ թե կորագիծ ափեզրքով, այլ բաց օվկիանոսով: Դա նույնպես պատմական փաստ է: Սակայն Օլերոնը մնաց հիշողությանս մեջ, թաքնվեց սրտումս: Սա իրոք, մի տեսակ սրտային, նույնիսկ կասեի՝ սիրային հարց է: Ավելին, ինչպես կասեին ֆրանսիացիները՝ «շերշե լա ֆամ» - «կին փնտրեք (որպես պատճառ)»: Դեռ անցած դարի ութսունական թվականների կեսերին «Լիտերատուրնայա գազետա»-ի գործուղման վկայականով ճամփորդելով Ֆրանսիայում՝ լայնքով ու երկայնքով, մեր հայրենակիցներից իմացա մի շատ գեղեցիկ կնոջ մասին, որն իր մանկությունն ու պատանեկությունն անցկացրել էր հենց Օլերոն կղզում: Եվ նա աշխարհում առաջին կին-օվկիանոսագետն էր: Նավարկել է ծովերով ու օվկիանոսներով: Եվ նրա անունն էր Անիտա Կոնտի: Նա պրոֆեսիոնալ բնափորձագետ էր եւ ճանապարհորդ: Այն ժամանակ Ֆրանսիայում շատերից հետաքրքրվեցի Անիտա Կոնտի-Կարագոշյանի մասին, բայց ոչ ոք ոչ մի մանրամասն չկարողացավ հաղորդել ինձ: Ձախողվեց նաեւ իմ ցանկությունը՝ հանդիպելու «փեշավոր Մագելլանի» հետ, ինչպես ժամանակակիցներն էին կոչում մեր հայրենակցուհուն: Բոլորն ասում էին, որ նա շատ ծեր է եւ հաճախ է հիվանդանում: Եվ ահա երկար տարիներ անց, աշխատելով «Ամարաս» հրատարակչության տնօրեն Արկադի Ասրյանի «Հայուհիներ» երկհատորանոց հանրագիտարանի նախաբանի վրա, ես, կարելի է ասել գտա իմ համարյա մոռացված սերը: Ես արդեն մի քանի անգամ նշել եմ, որ Արկադին պարզապես պատմական սխրանք է գործել, մի ահռելի աշխատանքում ի մի բերելով բոլոր հայուհիների անունները, որոնք Երկիր մոլորակում մտել են այս կամ այն երկրի պատմության մեջ, որտեղ ապրել եւ ապրում են: Սկզբունքն անխախտելի է. երկհատոր հանրագիտարանի հերոսուհին պարտադիր կարգով պետք է մեր պետության կողմից դարձվի ճանաչելի, ընդունված, սիրված, գնահատված:**

*Տես էջ 8*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# «ՀԱԿ-իշխանություն երկխոսությունը միայն միկրո հաջողություն կունենա»




«Ժառանգություն» կուսակցության առաջնորդ **Րաֆֆի Հովհաննիսյանն** ամսի 19-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել էր, որ Հայաստանի յուրաքանչյուր նախագահ իր ներդրումն է ունեցել երկրի պետականաշինության մեջ, միաժամանակ նրանցից ամեն մեկն իր չափով պատասխանատվություն է կրում այսօրվա անիրավ, անսահմանադրական ու հակաժողովրդական վիճակի համար: Նրա կարծիքով` հենց այդ նույն պետական գործիչների պատասխանատվության մեջ է մտնում նոր սերնդի համար այլընտրանքներ ստեղծելը: Երեկվա համարում «**Ազգը**» հանգամանալից անդրադարձել է Րաֆֆի Հովհաննիսյանի ասուլիսին, որտեղ նա նշել էր. «3 նախագահների ներդրումը պետք է արժանանա թե՛ քաղաքական, թե՛ իրավական գնահատականի, եւ կարեւոր է, թե ո՞վ է լինելու չորրորդը: Ո՞րն է լինելու մեր 4-րդ գույնը»: Րաֆֆի Հովհաննիսյանի կարծիքով` 4-րդ ներկայացուցիչը միանգամայն նոր տիրույթից է լինելու:

ԱԺ նախկին փոխխոսնակ **Կարապետ Ռուբինյանն** էլ, երեկ ասուլիսի ընթացքում արձագանքելով Րաֆֆի Հովհաննիսյանի` 4-րդ ներկայացուցչի վերաբերյալ դիտարկմանը, կատակելով նշեց. «Կտրականապես դեմ եմ, որ հաջորդ նախագահն այլ գույն ունենա, նա պետք է լինի զոլավոր: Զեբրի ու վագրի խառնուրդ»: Ապա կատակի մասից անցնելով արձագանքի լուրջ մասին` ցանկություն հայտնեց, որ հաջորդ նախագահ կա՛մ չլիներ, կա՛մ լիներ մի այնպիսի ծրագրով նախագահ, որը կհայտարարեր, թե գալիս է իշխանության 2 տարում սահմանադրական բարեփոխում անելու ու դեպի խորհրդարանական հանրապետություն անցում կատարելու համար: «Այդպիսի թեկնածուին ես լիաթոք կպաշտպանեի: Եվ հաջորդ նախագահը պետք է լինի նախկին ու ներկա 3 նախագահների եռանկյունուց դուրս», հավելեց Կարապետ Ռուբինյանը: Իսկ լրագրողներից մեկի դիտարկմանը` միգուցե Կարապետ Ռուբինյանն իրեն առաջադրվի նախագահի թեկնածու եւ իրեն էլ կատարի իր պատկերացումները, բանախոսը պատասխանեց, թե կքննարկի այդ առաջարկը:

Այնուհետեւ անդրադառնալով Հայ ազգային կոնգրեսի գործելակերպին, մասնավորապես իշխանության հետ սկսած երկխոսությանը` Կարապետ Ռուբինյանը նախ կարծիք հայտնեց, որ ՀԱԿ-ում վերջին շրջանում որոշակի լճացում է նկատվում. «Ինձ շատ զարմացրեց ՀԱԿ-ի քաղաքական կուրսի փոփոխությունը` կապված անցնցում երկխոսությանը»: Կ. Ռուբինյանն ասում է, որ դեմ չէ այդ երկխոսությանը, սակայն, ըստ նրա, երկրի առջեւ ծառացած խնդիրները պահանջում են ավելի խոր, արմատական փոփոխություններ: Իսկ ՀԱԿ-ը խաղաղ ու անցնցում ճանապարհի ընտրության մասին հայտարարեց այն ժամանակ, երբ երկրում տիրող տնտեսական անկումն ու սոցիալական վիճակի վատթարացումը համընկան արաբական հեղափոխություններին, որոնք ժողովրդի մեջ մեծ ոգեւորություն մտցրին: Ժողովուրդը ցույց տվեց, որ պատրաստ է կանգնելու ու մինչեւ վերջ պայքարելու իր իրավունքների համար: Ըստ Կարապետ Ռուբինյանի` նման իրավիճակում սկսված ՀԱԿ-իշխանություն երկխոսությունը միայն միկրո հաջողություններ է արձանագրելու: «Լավ է, որ քաղբանտարկյալներ չենք ունենալու: Հայտարարվում է, որ դա էապես կլիցքաթափի իրավիճակը: Սակայն էապես լիցքաթափված իրավիճակում էլ ինչո՞ւ պետք է ռեժիմը սկսի բանակցել իր հրաժարականի շուրջը», նշեց բանախոսը: Իսկ հարցին` միգուցե ՀԱԿ-ն այսպիսի կեցվածքով լուծում է իր մանդատների՞ խնդիրը ապագա խորհրդարանում, բանախոսը պատասխանեց. «Կարող է` իրենք հաշվարկել են, որ դիմակայության ճանապարհն իրենց հեռանկար չի խոստանում»:

**Ի. Պ.**

# Կանխատեսելի խաղեր

*1-ին էջից*

**Սակայն ամենահետաքրքրականը Հայաստանի երկրորդ նախագահի պահվածքն է, որը մի քանի օր առաջ մի շարք ներքաղաքական անդրադարձներ անելով եւ հետեւելով դրանց արձագանքներին, մեկ օր առաջ իր խոսնակի շուրթերով արձագանքներին որակումներ է տվել, Քոչարյանի` մարտի 1-ի բացահայտումների հետ կապված վախերի մասին ասածների ի պատասխան նկատելով, թե պարոնայք ընդդիմադիրներն նախագահ Քոչարյանին չափում են իրենց արշինով, նա կարիք չունի արդարանալու, նրան անհնար է վախեցնել, եւ նա երբեք չի «քցում» (սա ընդդիմախոսների օգտագործած տերմինն է). «2008 թվականի մարտի 1-ի ողբերգական իրադարձությունները լիովին ծանրացած են Տեր-Պետրոսյանի խղճին` որպես մարդկային զոհերի հանգեցրած անկարգությունների հիմնական ոգեւորողի, եւ, ըստ էության, կազմակերպչի: Եվ հենց արածի համար պատասխանատվությունից երկյուղն էլ Ռոբերտ Քոչարյանի դեմ ՀՀՇ-ի (Տեր-Պետրոսյանի) հարձակումների հիմնական դրդապատճառն է», ասել է Քոչարյանի խոսնակ Վիկտոր Սողոմոնյանը: Սա` նշան, որ ընդդիմության եւ իշխանության գծած նոր եւ կանխատեսելի ձեւաչափին հակադրվողներ, այնուամենայնիվ լինելու են:**

**Ներքաղաքական ուրիշ խաղացողներ եւս փորձում են չտեղավորվել պարտադրվող սխեմայում: Րաֆֆի Հովհաննիսյանը, ինչպես փորձեց դա անել ՀԱԿ-ի հերթական հանրահավաքի օրն իր հացադուլով, այժմ էլ փորձում է ՀԱԿ-ի «վճռական» հանրահավաքից առաջ փոխել իրերի դրությունը, ինչ-որ նոր զարգացումներ սաղմնավորել` ի՞նչ, պարզ կդառնա այսօր:**

**Կարապետ Ռուբինյանի հանդիպումը երեկ լրագրողների հետ հետաքրքրություն էր ներկայացնում, քանի որ ՀԱԿ նախկին անդամը, որ միշտ հրապարակորեն հայտնել է իր անհամաձայնությունները իր կուսակիցների հետ, եւ ընդհանուր առմամբ համարվելով չարատավորված գործիչ, նոր կառույցներ ձեւավորող ֆավորիտ է համարվում: Ռուբինյանը Առցանց ազատականների ալյանսի (ՅԱ նախաձեռնության) ղեկավարն է, սպասումն այն էր, որ մի օր էլ առցանց ազատականներն անցնելու են ռեալ նախաձեռնության: Բայց Ռուբինյանն առայժմ երեկ չսնեց այդպիսի սպասումները` նկատելով, թե նոր կուսակցություն ստեղծելու նպատակ չունի գոնե այս պահի համար, ոչ մեկի հետ ՅԱ-ի անունից բանակցություն չի վարում, որպես անհատ է մասնակցում որեւէ քննարկման, թեեւ Րաֆֆի Հովհաննիսյանի եւ «Ժառանգության» այլ անդամների հետ հանդիպումների մասին, ինչպես նաեւ մի քանի դաշնակցականի հետ խմելը կամ ՀԱԿ-ի իր ընկերների հետ հանդիպումներ շարունակելը չժխտեց: Գնահատելով ներքաղաքական առկա զարգացումները, նա այն եզրակացության է, որ ամեն ինչ հանգելու է հերթական խորհրդարանական ընտրությունների, այդ ընտրությունների թամադան էլ Սերժ Սարգսյանն է լինելու: Ուրեմն` հեղափոխության մասին պետք է մոռանալ:**

**Իսկ դե որ լուրեր կան, թե այնուամենայնիվ` ամերիկյան կնքահայրությամբ (այս դեպքում` կնքամայրությամբ) մի կուսակցախումբ է ստեղծվելու մոտակայում, կամ Քոչարյանն է երրորդ բեւեռ ձեւավորում, սրանց մեջ տարօրինակ ոչինչ չկա, նկատի առնելով երկու գերտերությունների` մեր գործերին խառնվելու հավերժական մղումը: Եվ նկատենք` ՀԱԿ-իշխանություն ձեւաչափին զուգահեռ երրորդ ու չորրորդ բեւեռներն անպայման կստեղծվեն, նրանք եւ նրանց հովանավորներն անընդհատ կխոսեն Ղարաբաղյան կարգավորման բացառապես խաղաղ ճանապարհով լուծումից, ինչպես Քլինթոնն էր երեկ Նալբանդյանին ասել, եւ ամեն պատրոն իր ստեղծածի միջոցով է փորձելու ռուս-ամերիկյան թելերը քաշել, սրան ոչ մի իրազեկ չի կասկածում: Արդեն իսկ Օբամայի առաջադրած ՆԱՏՕ-ական դեսպանի թեկնածուի հանգամանքը ցույց է տալիս, թե այդ կողմը նպատակադրվել է շեշտադրումներ փոխել Հայաստանի ուղղությամբ տարվող քաղաքականության մեջ, եւ մեր ու Սփյուռքի հոգսն այս իմաստով բազմապատկվելու է, ՆԱՏՕ-ական ռազմական կառույցի փորձառությունն էլ անպայման Հայաստան մտնելու է, ու հաստատ խորհրդարանական ընտրություններից առաջ` ընտրություններին դերակատար դառնալով: Ապացո՞ւյց է պետք այս կողմից եկող միջազգային դերակատարման, խնդրեմ. Օբաման երեկ հայտարարեց, թե Եգիպտոսի մեկ միլիարդ դոլարի պարտքը Սպիտակ տունը չեղյալ է հայտարարում, դեռ մեկ միլիարդ էլ վարկ կտրամադրի, միայն թե ժողովրդավար երկիր դառնա Եգիպտոսը, իսկ արաբական աշխարհն էլ ընդունի ԱՄՆ-ի դաշնակից Իսրայելի դերը արաբական աշխարհում: Սա` խոսուն օրինակ, որ ամերիկացիք երբ պետք է` թե՛ մտրակ են կիրառելու, թե՛ քաղցրաբլիթ, եւ նույնը հարմար պահին կանեն Հայաստանի հանդեպ: Կլինի դա ներքաղաքական կյանքո՞ւմ, տնտեսական իրողություններո՞ւմ, թե՞ Ղարաբաղի հարցում: Նույնը կանի մեր ռազմավարական գործընկերը: Ուրեմն` գոտեպնդվենք եւ գրագետ խաղանք:**

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Գյուղտեխնիկան եւ թունաքիմիկատները կազատվեն ԱԱՀ-ից

**Հայաստան ներկրվող գյուղտեխնիկան, դրա պահեստամասերը, պարարտանյութերը, թունաքիմիկատները կազատվեն ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ): Լրագրողներին ներկայացնելով երեկ կառավարության ընդունած որոշումը ավելացված արժեքի հարկի փոփոխություններ կատարելու վերաբերյալ, գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հայտնեց, որ վերոնշյալ ապրանքները կազատվեն ԱԱՀ-ից եւ սահմանին, եւ ներքին շուկայում իրացման ժամանակ: Ըստ գյուղնախարարի, այս փոփոխությունը օրենքում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտի նկատմամբ պետական աջակցության քաղաքականությամբ: Սերգո Կարապետյանի հավաստմամբ, դա կբերի նաեւ գյուղատնտեսության ոլորտում աշխուժացմանը, գների իջեցմանը, հնարավորություն կտա ոլորտում ներգրավվածներին թարմացնելու հին գյուղտեխնիկան:**

# Գյուղմթերքների գները կիջնեն

**Լրագրողների հարցին, թե ի՞նչ սպասելիքներ կան այս տարվա բերքից, Սերգո Կարապետյանը պատասխանեց, որ միջին բերքատվություն է սպասվում այս տարի, որոշ համայնքներում բարձր կլինի, որոշներում` ոչ այնքան: Դա, ըստ նախարարի, վերաբերում է հատկապես ծիրանի բերքին, իսկ խաղողի բերքը առատ է լինելու: Սերգո Կարապետյանը հավաստիացրեց նաեւ, որ հունիս ամսին գյուղմթերքների գները կիջնեն:**

# Հայաստանը` միջազգային տրանսպորտային ֆորումի նիստում

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, մայիսի 25-27-ը Լայպցիգում (Գերմանիա) կայանալիք Միջազգային տրանսպորտային ֆորումի (նախկին Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանս) տարեկան նախարարական նիստին կմասնակցի նաեւ Հայաստանի պատվիրակությունը` տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանի գլխավորությամբ:**

**Առաջիկա նիստը կարեւորվում է հատկապես Միջազգային տրանսպորտային ֆորումի գլխավոր քարտուղարի ընտրություններով: Հաղորդագրությունից տեղեկանում ենք նաեւ, որ ֆորումի շրջանակներում համաձայնագիր կստորագրվի Հայաստանի Հանրապետության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջեւ ավտոմոբիլային ճանապարհներով միջազգային ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների մասին:**

# Google Nexus S-ը Հայաստանում

**Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերությունը բացառիկ իրավունք է ձեռք բերել ներկայացնելու Google Nexus S սմարթֆոնը Հայաստանում:**

**Samsung եւ Google ընկերությունների համատեղ արտադրության Google Nexus S-ն սմարթֆոնը ներկայումս գոյություն ունեցող ամենաարագագործ հեռախոսներից է: Այս սմարթֆոնում ի սկզբանե ներկայացված են Google-ի լավագույն հնարավորությունները` Google Search-ը, Google Maps-ը, Mobile Instant-ը, Google Earth-ը և այլն... Google Nexus S-ն արժե 295000 դրամ: Այն կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ` առանց կանխավճարի:**

**Ա. Մ.**

# Ամերիկան գնահատում եւ պարգեւատրում է պրոֆ. Գեւորգ Բարդակչյանին



Մայիսի 7-ին Նյու Յորքում եւ Էլիս կղզու Մեծ դահլիճում կայացած հոբելյանական քսանհինգերորդ հանդիսավոր արարողության ընթացքում Երեւանի պետական համալսարանի շրջանավարտ, Միչիգանի Մարի Մանուկյանի անվան ամբիոնի հայոց լեզվի եւ գրականության դասախոս, Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության նախագահ, պրոֆեսոր դոկտոր Գեւորգ Պարգեւի Բարդակչյանը պարգեւատրվել է The Ellis Island Medal of Honor` «Էլիս կղզու պատվավոր մեդալով», որը շնորհվում է Ամերիկայի էթնիկ խմբավորումների կոալիցիայի կողմից (National Ethnic Coalition of Organizations):

Այս պատվին արժանանում են ԱՄՆ էմիգրանտ այն քաղաքացիները, որոնք «ցայտուն նպաստ են բերել իրենց ազգային համայնքին, պապենական հայրենիքին եւ ամերիկյան հասարակությանը»` մշակույթի, գիտության, արվեստի, ինչպես նաեւ տնտեսական-քաղաքական բնագավառներում: ԱՄՆ Կոնգրեսի կողմից պաշտոնապես ճանաչված այս շքանշանին անցյալում արժանացել են ԱՄՆ նախագահներ, մշակույթի, գիտության եւ արվեստի խոշոր գործիչներ եւ հայտնի քաղաքական դեմքեր:

# Հիշատակի ցուցահանդես եւ համերգ Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանում

Մայիսի 22-ին Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանի ժամանակակից արվեստի պատկերասրահում տեղի է ունենալու հիշատակի համերգ նվիրված Ցեղասպանության անմեղ զոհերին, տեղեկացնում է այդ առթիվ «**Ազգ**»-ին հասցեագրված հաղորդագրությունը:

Նախքան համերգը պաշտոնական արարողությամբ բացումն է կատարվելու «Հայոց ցեղասպանություն» խորագրով ցուցահանդեսի, որը 1915-23 թվերի ցնցող տեսարաններն է հանրությանը ներկայացնելու: Ցուցահանդեսի տեքստերն ու դահլիճի ամբողջական ձեւավորումը կատարել են ԱՀԳԹ-ի հանձնախմբի անդամներ Հայկ Տեր-Մանուելյանը, Բարբարա Մերգերյանը, Ջինա Հաբլանյանը, Գերրի Լինդ-Սինանյանը եւ Առաքել Ալմասյանը, մի շարք խորհրդատուների աջակցությամբ, իսկ պաստերի գրաֆիկական աշխատանքները` Էդ Մալուֆը («Կոնստենս դիզայն կոլաբորեյթիվ» ընկերությունից): Նկարները ցուցադրված են լինելու ժամանակագրական կարգով:

Ցուցահանդեսի բացումը կատարելու է Մ. Նահանգներում Հայաստանի առաջին դեսպան (1993-99) Ռուբեն Շուգարյանը, որն այժմ Մասաչուսեթսի Թաֆթս համալսարանի դիվանագիտության եւ իրավաբանության ֆակուլտետի դասախոսներից է:

**Հ. Ծ.**

# 9 ամսվա փոխարեն՝ 15-20 օրում

## Հնարավոր կլինի փոխել հողամասերի նշանակությունը

Հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ նոր կարգը սահմանելիս, կառավարության վերջին նիստում, գործող կարգի մասին վարչապետ **Տիգրան Սարգսյանը** հետեւյալ կերպ արտահայտվեց. «Փաստաթուղթը գնում է նախարարություններ եւ շաբաթներով մնում այնտեղ: Պետք է զանգենք, խնդրենք, որ բյուրոկրատները թղթերը շրջանառության մեջ դնեն, ուղարկեն կառավարություն, որպեսզի որոշում ընդունվի: Ինչպե՞ս կարելի է դա հանդուրժել: Քաղաքացին 9 ամիս սպասում է, որ պատասխան ստանա: Անթույլատրելի է: ... Մարդկանց կա՛մ ասենք այո, կա՛մ՝ ոչ, բայց հնարավորինս սեղմ ժամկետում: Բացի դրանից՝ որոշումն ունի հստակ հակակոռուպցիոն բնույթ: Հասկանալի է, չէ՞, չինովնիկը, տեղում նստած, ինչու է ձգձգում որոշման ընդունումը. սպասում է մինչեւ մեկը գա, բարեխոսի եւ այլն»:

Թե ինչպե՞ս էր ընթանում հողամասի նշանակության փոփոխման գործընթացը մինչ կառավարության կողմից այն փոփոխելը, հարցրեցինք տարածքային կառավարման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ **Աշոտ Գիլոյանին**: Նրա պատմածով, մինչ հողերի գոտեւորման եւ օգտագործման սխեմաներ կազմելը, 2003-ին կառավարության որոշմամբ հաստատվել են հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ: Դրանք քարտեզներ են, որտեղ նշվում են տվյալ համայնքի հողերի չափը, դրանց նշանակությունը՝ վարելահող, բնակավայր եւ այլն: Այդ ժամանակավոր սխեմաներում փոփոխության խնդիր առաջանալու դեպքում, հարցը որոշակի փուլերով պետք է հասներ վարչապետի որոշմամբ 2001-ին ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին:

Հողերի նշանակությունը փոխելու առաջարկն ընդունում էր համայնքի ավագանին: Դա կարող էր լինել ինչպես քաղաքացու, իրավաբանական անձին պատկանող հողամասի նշանակության փոփոխման դեպքում (ենթադրենք գյուղնշանակության հողերը բնակավայր կամ արդյունաբերական նշանակության դարձնելու մասին), այնպես էլ հենց համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի դեպքում: Համայնքի ավագանու որոշումը ներկայացվում էր մարզպետարան: Մարզպետարանում ստեղծվում էր հանձնաժողով, որի մեջ ընդգրկվում էին հողաշինության վարչության պետը, գյուղատնտեսության վարչության պետը, մարզային կադաստրի, էլեկտրական ցանցերի, գազի, ջրային տնտեսության եւ այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչները: Հանձնաժողովը քննարկում էր տվյալ համայնքի ավագանու որոշումը եւ իր եզրակացությամբ այդ գործն ուղարկում վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին: Վերջինս, նման գործերի որոշակի քանակ հավաքվելուց հետո միայն նիստ էր գումարում, դրանք բոլորն ուղարկում հանձնաժողովի մեջ ընդգրկված 8 նախարարություններ: Նախարարություններում ծանոթանում են այդ գործերին եւ իրենց առաջարկությունները ներկայացնում միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ժամանակ: Դրանից հետո էլ, եթե որեւէ քաղաքաշինական կամ այլ խնդիր չէր լինում, հանձնաժողովը համապատասխան որոշում է ընդունում եւ դարձյալ ուղարկում վերոնշյալ 8 նախարարություններին՝ կնիքով հաստատելու համար: Մի խոսքով՝ այս ամբողջ գործընթացը բավականին երկարում էր: Մեր զրուցակիցը եւս փաստեց, որ եղել են դեպքեր, երբ գործընթացը տեւել է 9 ամիս, թեեւ նշեց, որ դրա համար կարող էին լինել նաեւ օբյեկտիվ պատճառներ:

Ինչպե՞ս է փոխվել այդ տանջալից գործընթացը կառավարության վերջին որոշմամբ: Տարածքային կառավարման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետի ներկայացմամբ, հիմա, հողի նպատակային նշանակությունը փոխելու համայնքի ավագանու որոշումը ներկայացվում է մարզպետին, որն էլ 5 օրվա ընթացքում այն պետք է ներկայացնի տարածքային կառավարման նախարարությանը: Աշոտ Գիլոյանը չբացառեց, որ միջգերատեսչական հանձնաժողովը առաջիկայում կարող է վերացվել:

Տարածքային կառավարման նախարարությունը, ավագանու ընդունած եւ մարզպետի ներկայացրած որոշումը եռօրյա ժամկետում ներկայացնում է համապատասխան նախարարություններին, նրանք էլ հնգօրյա ժամկետում իրենց կարծիքներն ու եզրակացությունները պետք է ներկայացնեն: Եթե նախարարությունները անընդունելի են համարում այդ որոշումը, ապա պետք է հիմնավորեն, թե ո՞ր օրենսդրական ակտի համաձայն: Եթե նշված 5 օրում նրանք կարծիք չեն հայտնում, նրանց կարծիքը համարվում է դրական: Այնուհետեւ այդ կարծիքները նախարարությունը ներկայացնում է կառավարություն, որն էլ ընդունում է որոշումը: Վերոնշյալ գործընթացը տեւում է 15-20 օր նախկին 9 ամսվա փոխարեն: Միաժամանակ վերանում են պետական տարբեր օղակներում գործընթացը ձգձգելու եւ հավելյալ անօրինական վճարներ պահանջելու սողանցքները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Կենցաղային քիմիան՝ ալերգիկ հիվանդությունների պատճառ

Կենցաղային քիմիայի հետեւանքով առաջացած ալերգիկ հիվանդությունները կանանց շրջանում գրավում են 3-րդ տեղը՝ չարորակ ուռուցքներից եւ սրտանոթային հիվանդություններից հետո: Այդպիսի խնդիրներ ունեն այն կանայք, ովքեր հաճախ են շփվում տարբեր մաքրող հեղուկների, լվացքի փոշու, օճառի, օծանելիքի հետ: Ալերգիկ գործոնները կարող են լինել վարակածին, դեղորայքային, սննդային, արտադրական, մեխանիկական, քիմիական, կենցաղային, բուսական ծագման, ցրտից եւ այլն:

«Կենցաղային քիմիային համարյա բոլոր կանայք են առնչվում: Ամենօրյա այդ խնդիրներից խուսափելն անհնար է: Արդեն մի քանի տարի լվացքի փոշուց ձեռքերս այտուցվում են, ճաքճքում, իսկ նշանակված բուժումը վերջնական արդյունք չի տալիս», պատմում է 42-ամյա **Գոհարը**:

Ալերգիկ հիվանդությունների բուժման հարցում ամենակարեւորն ու բարդը հիվանդություն առաջացնող ալերգեն ազդակի հայտնաբերումն է: Երբեմն բավական է լինում դադարեցնել ալերգենին առնչվելը, եւ առողջացումը երաշխավորվում է: Հիվանդության մասին մանրակրկիտ տեղեկություններ հավաքելով՝ բժիշկ-ալերգաբանները մաշկային թեստերով կարող են հայտնաբերել «մեղավոր» ալերգենը, որից հետո որոշվում է՝ ինչո՞վ, ինչպե՞ս, ե՞րբ եւ որտե՞ղ պետք է բուժվի տվյալ հիվանդը:

Մաշկաբան **Գրետա Սիմոնյանի** խոսքով՝ այս հիվանդությունների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է ժամանակին հայտնաբերել եւ բուժել վարակի օջախները, առանց բժշկի նշանակման չընդունել տարատեսակ դեղորայքներ: Ինչպես նաեւ բնակելի շինություններում պարբերաբար կատարել խոնավ մաքրում, դրանք հաճախակի օդափոխել: Սննդակարգում բացառել ալերգեն պարունակող մթերքները, բուժել ավիտամինոզները, լյարդի, աղեստամոքսային, էնդոկրին գեղձերի ու փոխանակության խանգարման հիվանդությունները:

Գոհարը շատ անգամ է դիմել մաշկաբաններին: Ինքն ալերգիայի պատճառը գիտի, բայց բժիշկների առաջարկած դեղերը ընդամենը որոշ ժամանակով են դադարեցնում ալերգիայի զարգացումը:

Ինչ վերաբերում է այս դեպքերին, մաշկաբանը խորհուրդ է տալիս կրել ռետինե ձեռնոցներ, ինչը կարող է կանխել կամ նվազեցնել ալերգիայի առաջացումը:

Գոհարի ալերգիկ ռեակցիան առաջանում է լվացքի փոշու օգտագործումից, եւ որեւէ ապրանքանիշ նշելն այս դեպքում ավելորդ է, մինչդեռ կան սպառողներ, որոնց ալերգիայի աղբյուրը առանձին ապրանքանիշ է:

Հայաստանում վաճառվող լվացամիջոցների միայն մի մասն է հայերեն մակնշված:

Սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները բազմիցս նշում են, որ պետք է պարտադիր սերտիֆիկացման ենթարկվեն հիգիենայի պարագաները, լվացամիջոցները, օճառները, օծանելիքը, ինչը գործնականում հաճախ չի իրականացվում՝ օգտվելով այն հանգամանքից, որ վերահսկողությունը գրեթե բացակայում է, իսկ սպառողները անիրազեկ են: Դրանց մակնշման մեջ պետք է ցուցումներ լինեն պահպանման պայմանների, ջրի ջերմաստիճանի վերաբերյալ, մինչդեռ եթե մակնշումը հայերեն չէ, սպառողները կարող են տուժել առողջապես, ինչպես նաեւ վնաս հասցնել շրջակա միջավայրին: Կենցաղային քիմիայի բազմաթիվ ապրանքների մակնշման մեջ նշված է, որ բաց ձեռքերով, առանց ռետինե ձեռնոցի չի կարելի շփվել, բայց սպառողները չգիտեն այդ մասին: Ինչպես նաեւ չպետք է անտեսել, որ մազերի լվացման որոշ միջոցներ (շամպուններ) սխալ օգտագործման դեպքում կարող են պատճառ լինել ալերգիայի, մազաթափության, մազերի որակի վատացման:

Կենցաղային քիմիա օգտագործելու դեպքում անհրաժեշտ է հետեւել բոլոր ցուցումներին, եթե դրանք առկա են, եւ բացակայության դեպքում դիմել համապատասխան մարմիններին, քանի որ դրանց սխալ կամ անզգույշ կիրառումը կարող է հանգեցնել անցանկալի հետեւանքների:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

# Լոռու գավառի ժողովրդագրությունը

Էթնոժողովրդագրական գործընթացի ուսումնասիրության կարեւորությունը մինչեւ վերջերս չէր գիտակցվում մեր պատմագրության կողմից: Ի թիվս այլ գործոնների, դա պայմանավորված էր նաեւ նրանով, որ խորհրդահայ պատմագրությունը պարտադրված էր հայոց պատմության մի շարք հարցերում կաղապարվել անհեթեթ գաղափարական շրջանակներում: Մինչդեռ էթնոժողովրդագրական գործընթացների գիտական անաչառ վերլուծությունը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է ազգաբնակչության տեղաշարժերին, դրանց քաղաքական ու սոցիալ-տնտեսական նախադրյալներին, կարող է բանալի հանդիսանալ պատմական զանազան վիճելի եւ վիճարկելի թվացող հարցերի ճշմարտացի լուսաբանումը կատարելու համար:




Այս տեսանկյունից շատ կարեւոր եւ ուսանելի աշխատանք է կատարել ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող **Հասմիկ Ամիրջանյանը, որի «Լոռին XVIII դարի վերջին եւ XIX դարի առաջին երեսնամյակին»** խորագրով պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը վերջերս ներկայացվեց հայ ընթերցող հասարակայնության դատին: Ներածականում հեղինակը մասնանշում է, որ սույն թեման խիստ արդիական նշանակություն ունի, քանզի կարեւորվում է Լոռին վրացական պետության շրջանակներում տեղայնացնելուն ուղղված՝ վրաց պատմագիտության անհեթեթ փորձերին հակահարված տալու անհրաժեշտությունը: Աշխատությունը բաղկացած է երկու գլուխներից, առաջաբանից ու վերջաբանից, գրականության, անձնանունների ու տեղանունների ցանկից:

Առաջին գլխում («Լոռու գավառը XVIIIդ. վերջին - XIX դ. առաջին երեսնամյակին») քննության են առնվում վերոնշյալ ժամանակաշրջանում Լոռու ժողովրդագրական տեղաշարժերին վերաբերող մի շարք խորքային հիմնահարցեր: Հեղինակը նախ եւ առաջ ճշտում է Լոռու աշխարհագրական սահմանները, հիմնավորում, որ «Լոռի» աշխարհագրական տերմինը առաջին անգամ հիշատակվում է Դավիթ Անհողինի օրոք (996-1048թթ.), երբ Գուգարքում կառուցվեց 12 ամրոց, այդ թվում՝ Լոռին:

Հեղինակի գիտական հավաստի փաստարկումները վկայում են, որ Լոռին բոլոր ժամանակներում եղել է հայոց աշխարհի ռազմաքաղաքական կարեւոր եւ կենսունակ միավորներից մեկը: Այս առումով հետաքրքրական է այն փաստը, որ դեռեւս 1699թ. Իսրայել Օրու՝ Հայաստանի ազատագրության համար գործողությունների ծրագրում կարեւոր տեղ է հատկացված Լոռուն: Ըստ այդ ծրագրի, նշվում էին հայկական գավառները զինվորներ տրամադրելու կարողության չափով, այդ թվում նաեւ Լոռին, որտեղից նախատեսվում էր շուրջ 6000 մարդ: Լոռու նկատմամբ նկատելի շահագրգռություն է ցուցաբերել հեռավոր Մադրասում բնավորված հայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը, որն ակտիվ շփումների մեջ էր հայ եւ վրաց քաղաքական շրջանակների հետ:

Շատ կարեւոր է հեղինակի այն դիտարկումը, որ վրացական տիրապետությունը չկարողացավ փոխել Լոռու տիպիկ հայկական էթնո-մշակութային պատկերը՝ հօգուտ վրացականի եւ մինչեւ 19-րդ դարի սկզբները գավառի բնակչությունը շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ:

Այս ամենի վերաբերյալ հեղինակի եզրակացությունները հիմնված են գիտական սկզբնաղբյուրների փաստառատ տվյալների հիման վրա, որն, ի դեպ, սույն աշխատության կարեւոր առավելություններից մեկն է:

Երկրորդ գլխում («Ժողովրդագրական գործընթացները Լոռու գավառում») գիտական օբյեկտիվ դիտարկումներով ու մոտեցումներով ներկայացվում է Լոռու գավառում 18-րդ դարի վերջերից մինչեւ 19-րդ դարի առաջին երեսնամյակն ընկած ժամանակամիջոցում ժողովրդագրական գործընթացների ճշգրիտ պատկերը, բազմակողմանիորեն բացահայտվում են վերոնշյալ գործընթացների սոցիալ-տնտեսական եւ քաղաքական ենթաշերտերն ու դրդապատճառները: Ըստ այդմ, լավագույնս քննության է առնվում արցախահայության Լոռու գավառում վերաբնակեցման խնդիրը հայ-ռուս-վրացական հարաբերությունների խորապատկերի վրա: Հեղինակը Լոռու էթնիկ գործընթացներում մասնանշում է հետեւյալ ուղղությունները.

Տեղաշարժեր, որոնք տեղի ունեցան Արեւմտյան Հայաստանի տարածքներից դեպի Լոռի եւ հակառակը (թաթարների գաղթ դեպի թուրքական սահմաններ),

Երկրորդ խմբի տեղաշարժերը վերաբերում են Արեւելյան Հայաստանի տարբեր վայրերից դեպի Լոռի տեղի ունեցած տեղափոխություններին,

Երրորդ ուղղությունը՝ Լոռու սահմանների շրջանակներում ընթացած տեղաշարժերն էին (բնակիչների տեղափոխություն Լոռու մի տարածքից մյուսը):

Վերոնշյալ տեղաշարժերի հետեւանքով տեղի է ունենում Լոռու բնակավայրերի բնակչության որոշ աճ՝ հայ բնակչության թվի համալրում: Լոռին վերաբնակեցնելու հարցում նկատելի շահագրգիռ վերաբերմունք է ցույց տալիս ցարական կառավարությունը՝ ի դեմս նրա տեղական վարչական եւ ռազմական պաշտոնյաների:

Հետազոտության հեղինակը ցարիզմի կողմից Լոռու վերաբնակեցման կարեւորությունն ու օգտակարությունը բացատրում է տարածքի սահմանամերձ գոտի լինելով, ուստի առաջնային էին դառնում ցարական իշխանությունների ռազմավարական նկատառումները, ինչպես նաեւ խիստ կենսական էր սույն նոր տարածքում հարկատու բնակչություն ունենալը, տեղի հանքերի շահագործումը, տնտեսական կյանքին զարկ տալու անհրաժեշտությունը: Սակայն վերաբնակիչների մի մասը նոր բնակավայրերում մնալով լիովին անօգնական, զուրկ ապրուստի տարրական պայմաններից, ձգտում էր հեռանալ այլ վայրեր:

Աշխատության հեղինակի հիմնական եզրահանգումը հետեւյալն է. վերաբնակեցումներից չխախտվեց Լոռու էթնոժողովրդագրական պատկերը: Լոռու գյուղերը, մինչեւ վերաբնակեցումը լինելով լիովին հայաբնակ, դրանից հետո էլ համալրվելով բացառապես հայ բնակչությամբ, պահպանեցին իրենց թվական գերակշռությունը եւ էթնոժողովրդագրական բնականոն պատկերը նաեւ հետագայում:

Պատմաբան Հասմիկ Ամիրջանյանի աշխատությունը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ եւ նախատեսված է ոչ միայն պատմաբանների, այլեւ ընթերցող լայն հասարակայնության համար:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, հրապարակախոս

# Ինչ է փնտրում Թուրքիան արաբական աշխարհում

Արաբական աշխարհում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունների համաշխարհային թե ռուսաստանյան մեկնաբանությունները, բնականաբար, աչքի են ընկնում մեծ տարակարծությամբ, որի հիմքը շահերի տարբերություններն են: Ռուսներն, օրինակ, քաջ գիտակցում են, որ կորցնելով Սիրիան, շեշտակի կկորցնեն ազդեցությունը գրեթե ողջ Մերձավոր Արեւելքում:

Ներկա իրողությունների նկատմամբ Ռուսաստանում առկա մոտեցումների մեջ արժե առանձնացնել, այսպես ասած, «թուրքական» ուղղությունը, ինչը չի կարող շահագրգիռ չլինել նաեւ հայերիս համար:

Սրընթաց քաղաքական բեկումների հենքի վրա շատ փորձագետների համար իր գործողություններով անըմբռնելի ու անկանխագուշակելի է դարձել լեգալ լայն ասպարեզ դուրս եկած մութ ուժը՝ «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական կազմակերպությունը: Դժվար է ասել, ինչքանով է հավաստի, սակայն ռուսաստանցի որոշ մեկնաբաններ այն կարծիքն են հայտնում, որ նոր պայմաններում, իսկ մասնավորապես Եգիպտոսում զարգացման նոր մոդելը կձեւավորվի «Մուսուլման եղբայրներ»-բանակ-Թուրքիա» եռակողմ համագործակցության շրջանակում: Մարտին Կահիրեում էր Թուրքիայի նախագահ Գյուլը, որը հանդիպեց և՛ զինվորականների, և՛ իսլամիստների ղեկավարության հետ: Թուրքիայի կառավարող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության եւ «Մուսուլման եղբայրներ» շարժման միջեւ արդեն տեւական ժամանակ գոյություն ունի վստահության բարձր մակարդակ, իսկ ներկա թուրքական համակարգը օրինակ է ծառայում եգիպտացի իսլամիստների համար: Վերջիններս, ի դեպ, իրենց ձեւավորվող քաղաքական հաստատությունն անվանել են Ազատության եւ արդարության կուսակցություն: Թուրքասիրությունն ակնհայտ է. երկու ինստիտուտների գործունեության հիմքում նույն ընդհանրացված սկզբունքն է՝ հասարակության կյանքում սոցիալական ակտիվ դերը մուսուլմանի համար նույնքան կարեւոր է, որքան նրա աղոթքը:

Ստացվում է այնպես, գրում է ռուսաստանցի մի քաղաքականագետ, որ փաստորեն միայն Թուրքիան կարող է այսօր երաշխիքային դեր ստանձնել եգիպտացի «եղբայրների» ու բանակի միջեւ: Միայն Անկարան ունի դրա համար անհրաժեշտ ռեսուրսներ, քանզի Թուրքիայի ղեկավարությունը մեծ հեղինակություն ունի առհասարակ ողջ իսլամական աշխարհում:

Ինչո՞ւ է Թուրքիան այդքան ակտիվ ու ազդեցիկ Եգիպտոսում, եւ ինչո՞ւ Կահիրեն նրան ընդառաջ է գնում ստրատեգիական շատ հարցերում: Մուբարաքի կառավարման տարիներին Եգիպտոսը կորցրեց իր առաջատար դիրքերը արաբական աշխարհում, վերածվելով երկրորդական խաղացողի նույնիսկ իր համար գերկարեւոր Սուդանի եւ Պաղեստինի հարցերում: Ահա եւ Եգիպտոսի հետհեղափոխական կայուն զարգացումը կնպաստի ինչպես նոր Եգիպտոսի առաջընթացին եւ կորուսված լիդերության վերականգնմանը, այնպես էլ ավելի կամրապնդի Թուրքիայի դիրքերը աշխարհաշրջանում: «Թուրքական մոդելի հետագա արտահանումը, նշում է մոսկովյան թերթերից մեկը, թույլ կտա հիմք ստեղծել ներքին ինտեգրացման համար ինչպես արաբական, այնպես էլ ոչ իսլամական աշխարհում: Ընդ որում, Եգիպտոսը կարող է դառնալ Թուրքիայի գլխավոր արաբ գործընկերը այդ գործընթացում: Այդ իմաստով զգալիորեն կուժեղանան այն ծրագրերի իրագործման հեռանկարները, որոնք տակավին 1990-ական թվականներին նախաձեռնել էր Էրբականը, մասնավորապես իսլամական մեծ ութնյակի ստեղծումը»:

Անշուշտ իր նկրտումներում Թուրքիան չի կարող առաջնորդվել սոսկ քաղաքական-կրոնական շարժառիթներով: Անկարան գործում է նաեւ հօգուտ թուրքական բիզնեսի: Բանն այն է, որ այդ երկիրը մինչ այդ էլ գործարար սերտ կապեր ուներ իսլամամետ արաբ բիզնեսմենների հետ, որոնց համար Թուրքիան վերածվել է գործարար կյանքի անվտանգ գոտու: Եվ «Մուսուլման եղբայրների» հետ կապված եգիպտացի շատ բիզնեսմեններ, օրինակ, իրենց գլխավոր գրասենյակներն ունեն Ստամբուլում: Իսկ մուսուլման բիզնեսմենների միջազգային ասոցիացիան Թուրքիայից դուրս իր միջոցառումներն անցկացրել է միայն Կահիրեում:

Իսկ ինչպես են նայում ռուսները ԱՄՆ-ի գործողություններին արաբական աշխարհում՝ առնչված Թուրքիային: Այն կարծիքն է հայտնվում, որ ամերիկացիներին ձեռնտու է այն, ինչ անում են թուրքերը: Ակնհայտ է, որ առաջիններին չհաջողվեց իրենց միջամտումներով, այդ թվում նաեւ աշխարհաշրջանում ստեղծել որեւէ արդյունավետ գործող համակարգ: Բռնապետական վարչակարգերի տապալումից հետո առավել եւս հազիվ թե ԱՄՆ-ին հաջողվի արաբների վզին փաթաթել չաշխատող պլանի որեւէ մի այլ տարբերակ: Ուստի Վաշինգտոնը իր համար շահեկան է տեսնում թուրքական մոդելի տարածումը: Համենայն դեպս՝ առայժմ: Այստեղից էլ եւ մի գործոն, որը խանգարում է Օբամային արտաբերելու «ցեղասպանություն» բառը, ինչը կարող է վտանգել վստահելի հարաբերությունները տարածաշրջանի առանցքային ստրատեգիական դաշնակցի հետ:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Ջեկ Գեւորգյանը հիվանդացել է

**Բժիշկ Ջեկ Գեւորգյանը, որը հայտնի է «Դոկտոր Մահ» մականունով, հիվանդանոց է տեղափոխվել թոքաբորբի եւ երիկամների հիվանդության պատճառով, հաղորդում է Ֆրանսպրեսը:**

**Մի քանի շաբաթ առաջ 82-ամյա Ջեկ Գեւորգյանին կարճ ժամանակով դարձյալ հիվանդանոց էին տարել: «Դոկտոր Մահի» ներկայացուցիչները պնդում են, որ նա տառապում է գերհոգնածությունից, բայց վիճակը ծանր չէ: Գեւորգյանը Դետրոյթի արվարձանի (Միչիգանի նահանգ) William Beaumont հիվանդանոցում է:**

**Ջեկ Գեւորգյանը 8 տարի ամերիկյան բանտում է անցկացրել (2000-2007), քանի որ էվթանազիայի կողմնակից է եւ անհույս հիվանդ մարդկանց (130 հիվանդի) օգնել է իրենց կյանքին վերջ դնել ներարկման կամ գազով թունավորման միջոցով: Նրան բանտարկեցին ծանր հիվանդներից մեկի մահվան տեսագրությունը հեռուստատեսություն ուղարկելուց հետո:**



# Օբաման արտահայտվեց 1967-ի սահմաններով Պաղեստինի ստեղծման օգտին



**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Վաշինգտոնում Մերձավոր Արեւելքի իրադրությանը նվիրված իր ելույթում Իսրայելին կոչ է արել վերադառնալ 1967-ի սահմաններին: Օբաման ԱՄՆ նախագահների մեջ առաջինն է հայտարարում, որ Պաղեստինի պետությունը պետք է կազմավորվի 1967-ի սահմաններով:**

**«ԱՄՆ-ը վստահ է, որ բանակցությունների շնորհիվ պետք է կազմավորվեն երկու պետություն եւ որոշվեն Պաղեստինի մշտական սահմանները Իսրայելի, Եգիպտոսի ու Հորդանանի հետ, ինչպես նաեւ Իսրայել-Պաղեստին մշտական սահմանը», հայտարարել է Բարաք Օբաման: Նրա խոսքերով, Իսրայելի եւ ապագա Պաղեստինի պետության սահմանը «պետք է անցնի 1967-ի սահմանագծերով՝ տարածքների համաձայնեցված փոխանակմամբ, որպեսզի հաստատվեն ապահով եւ երկուստեք ճանաչվող սահմաններ»:**

**Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն գրեթե անմիջապես մերժել է Օբամայի առաջարկությունը: CNN հեռուստաընկերությունը մեջբերում է վարչապետի այն խոսքերը, թե 1967-ի սահմաններին վերադառնալը Իսրայելին կզրկեր ինքնապաշտպանության հնարավորությունից եւ «աղետ» կլիներ: Նեթանյահուն հիշեցրել է, որ 1967-ից առաջ Իսրայելին չպատկանած տարածքներում ներկայումս ապրում են տասնյակհազարավոր իսրայելցիներ: Նեթանյահուի հայտարարության մեջ մասնավորապես ասվում է, որ Իսրայելի կառավարությունը բարձր է գնահատում Օբամայի «հավատարմությունը խաղաղ գործընթացին», բայց գտնում է, որ «անկարելի է կենսունակ Պաղեստինի պետություն ստեղծել ի վնաս աշխարհի միակ հրեական պետության կենսունակության»:**

**BBC-ն ընդգծում է, որ Օբամայի հայտարարությունն արվեց Վաշինգտոնում Նեթանյահուի հետ նախատեսված հանդիպման նախօրեին: Իր ելույթում Օբաման նաեւ խոստացել է ներել Եգիպտոսի 1 մլրդ դոլարի պետական պարտքը, ինչպես նաեւ 1 մլրդ դոլարի ֆինանսական երաշխիքներ տրամադրել այդ երկրին:**

ԹԵԺ ԿԵՏԵՐ

# TEPCO-ի նախագահը հրաժարական տվեց



**«Ֆուկուշիմա-1» ատոմակայանի օպերատոր TEPCO ընկերության նախագահ Մասատակա Սիմիձուն պատասխանատվությունն իր վրա է վերցրել ԱԷԿ-ի վթարի համար եւ երեկ հրաժարական է տվել: Yomiuri թերթի տվյալներով, ընկերության նոր նախագահ է ընտրվել գլխավոր կառավարիչներից մեկը՝ Կացուտոսի Տիկուդատեն:**

**Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հիշեցնում է, որ մարտի 11-ի սաստիկ երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքով ԱԷԿ-ում շարքից դուրս եկավ ռեակտորների հովացման ավտոմատ համակարգը: Վեց էներգաբլոկներից չորսում տեղի ունեցան պայթյուններ, ռադիոակտիվ ֆոնը կտրուկ ուժեղացավ, 20 կմ շառավղով գտնվող բնակավայրերից մարդիկ տարհանվեցին: Վթարի հետեւանքները մինչեւ օրս չի հաջողվում վերացնել:**

**Աղետին հաջորդած առաջին օրերին ճապոնական լրատվամիջոցները TEPCO-ի նախագահին խստիվ քննադատեցին բացակայության համար: Այն ժամանակ TEPCO-ի մամլո ծառայությունը հայտարարեց, որ 66-ամյա Մասատակա Սիմիձուն հիվանդ է, սակայն ընկերության կենտրոնակայանը չի լքել եւ վթարի հետեւանքների վերացման գործողությունները մի քանի օր ղեկավարել է պառկած վիճակում: Միայն մարտի 30-ին Սիմիձուն աշխատավայրից տեղափոխվեց Տոկիոյի հիվանդանոցներից մեկը:**

**Մայիսին TEPCO-ն հայտարարեց, որ Մասատակա Սիմիձուն եւ մի քանի գլխավոր կառավարիչներ հրաժարվում են աշխատավարձից, քանի դեռ «Ֆուկուշիմա-1»-ի վթարը չի վերացվել:**

# ՆԱՏՕ-ն ոչնչացրել է լիբիական 8 ռազմանավ

## *Քադդաֆիի կինը եւ դուստրը Թունիսում են*

Երեկ գիշեր ՆԱՏՕ-ի օդուժի կործանիչները հարվածներ են հասցրել Լիբիայի ծովուժի մի շարք ռազմանավերի: Ավելի ուշ Հյուսիսատլանտյան դաշինքի հրապարակած հայտարարության մեջ նշվում է, որ Մուամմար Քադդաֆիին հավատարիմ ծովուժի 8 ռազմանավ է ոչնչացվել Տրիպոլիի, Ալ Խումսի եւ Սիրտի նավահանգիստներում: Ընդգծվում է, որ թիրախ էին դարձել միայն ռազմանավերը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Ֆրանսպրեսի տվյալներով, միայն Տրիպոլիի նավահանգստում որոտացել է 4 պայթյուն: ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները նշում են, որ գործողությունն իրականացվել է «խաղաղ բնակչության պաշտպանության եւ ծովում ՆԱՏՕ-ի ուժերի անվտանգության ապահովման» նպատակով: Վերջին շաբաթներին Քադդաֆիին հավատարիմ ուժերը քանիցս փորձել էին ականապատել Միսուրատայի նավահանգստի մուտքը: Մայիսի 16-ին նույն նավահանգստում ՆԱՏՕ-ի ռազմանավերը կանխել էին լիբիական ականված երկու մոտորանավակներով դիվերսիայի փորձը:

Ինչ վերաբերում է Քադդաֆիի ընտանիքին, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը երեկ CBS հեռուստաալիքի եթերում հայտարարել է, որ Լիբիայի ղեկավարի կինը եւ դուստրը, օրերս Թունիս մեկնելով, մնացել են այնտեղ: «Քադդաֆիի վարչակարգի վրա գործադրվող ճնշումը վերջին երկու օրերին այնքան է ուժեղացել, որ նրա կինը եւ դուստրը փախել են Թունիս», ասել է Քլինթոնը, ավելացնելով, որ Լիբիայի «նավթարդյունաբերության նախարարը անձնատուր է եղել»:

Պետքարտուղարը իր տեղեկությունների աղբյուրը չի նշել, բայց նախօրեին որոշ ԶԼՄ-ներ նույն տեղեկությունները հրապարակել էին, վկայակոչելով Թունիսի հատուկ ծառայություններին:

# Սիրիան պատասխանում է իր դեմ ձեռնարկած միջոցառումներին

**Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի եւ մի շարք այլ սիրիացի բարձրաստիճան պաշտոնյաների դեմ ԱՄՆ-ի ձեռնարկած միջոցառումների առնչությամբ երեկ Երեւանում Սիրիայի դեսպանատնից տեղեկացրին հետեւյալը: «Սիրիայի ժողովրդի հանդեպ այս միջոցառումները ամերիկյան իրար հաջորդած վարչակարգերի սահմանած պատժամիջոցների շղթայի մասն են: Դրանց նպատակն է իսրայելական շահերի ծառայելը: Այս պատժամիջոցները չեն ազդել եւ չեն ազդելու Սիրիայի ինքնուրույն որոշման, ինչպես նաեւ նրա դիմակայության վրա՝ ընդդեմ ամերիկյան կրկնվող փորձերի՝ իշխելու Սիրիայի ազգային որոշումը եւ համապարփակ բարեփոխումների իրականացումը»:**

**Հ. Ա.**

# Ստրոս-Կանն ազատվեց գրավի դիմաց, բայց կդատվի

Նյու Յորքի դատարանը գրավի դիմաց ազատ է արձակել ԱՄՀ-ի նախկին ղեկավար Դոմինիկ Ստրոս-Կանին, որին կասկածում են հյուրանոցի սպասավորուհուն բռնաբարելու փորձի մեջ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Ստրոս-Կանը տնային կալանքի տակ կլինի 1 մլն դոլար գրավագումար վճարելուց հետո: Բացի դրանից, արձակման պայմանները խախտելու դեպքում ստիպված կլինի վճարել եւս 5 մլն դոլար:

Կասկածյալը պարտավոր է հանձնել բոլոր ճամփորդական փաստաթղթերը, ինչպես նաեւ կրել հատուկ ապարանջան, որը թույլ կտա հետեւել նրա տեղաշարժերին: Մանհեթենի իր բնակարանում նա կլինի տեսախցիկի շուրջօրյա հսկողության տակ, ունենալով նաեւ առնվազն մեկ զինված պահապան:

Բացի դրանից, Նյու Յորքում երդվյալների մեծ ժյուրին որոշել է դատական հետապնդում սկսել Ստրոս-Կանի նկատմամբ: Նրան ամբաստանում են բռնաբարության փորձի եւ անօրինական արգելափակման համար:

# Մշակույթ

## Ֆրանսահայ նկարիչ Ռիշար Ժերանյանի ցուցահանդեսը բացվեց Ազգային պատկերասրահում

Ֆրանսահայ ճանաչված նկարիչ **Ռիշար Ժերանյանի** անհատական ցուցահանդեսը, որ նվիրված էր նկարչի 90-ամյակին, բացվեց Երեւանի Ազգային պատկերասրահում: Նկարչին մեծարեցին ու ջերմ խոսքեր հղեցին պատկերասրահի տնօրեն **Փարավոն Միրզոյանը**, արվեստաբաններ, մտավորականներ եւ այլք: Ցուցահանդեսում, որը կգործի մինչեւ հունիսի 3-ը, երեք սրահներում ներկայացված են նկարչի տարբեր տարիների 50 աշխատանքներ, որոնցից միայն հինգն է Ազգային պատկերասրահի ֆոնդից, մնացյալը նկարիչն իր հետ բերել է Փարիզից, որից 14-ը նկարիչը նվիրեց Ազգային պատկերասրահին` 11 գեղանկար եւ 3 գրաֆիկական աշխատանք: «Ռիշար Ժերանյանի գործերը էկլեկտիկ են, որովհետեւ նկարիչը մշտապես փնտրտուքների մեջ է, միշտ զարգացնում է, ժամանակին համաքայլում է: Ունի իր դիրքորոշումը կյանքի, դեպքերի, գեղեցկությունների եւ փիլիսոփայության, անպայման նաեւ երաժշտության նկատմամբ: Վերջինս արտահայտված է նկարչի երաժշտական շարքի ստեղծագործություններում», ասաց Ազգային պատկերասրահի գեղանկարի բաժնի վարիչ, տեսաբան **Արմեն Գասպարյանը**:



Ռիշար Ժերանյանը ծնվել է 1921-ին Սեբաստիայում, վաղ հասակում տեղափոխվել է Ֆրանսիա ու կրթություն է ստացել Մարսելի Գեղարվեստի դպրոցում, այնուհետեւ` Փարիզի Ժյուլիեն եւ Գրան Շոմեր ակադեմիաներում: Արվեստագետն իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել աշխարհի տարբեր երկրներում ու արժանացել մի շարք մրցանակների, այդ թվում` Բնանկարի օնֆլյորի մրցանակի (1952), Դովիլ քաղաքի «Մեծ մրցանակի» (1952), Փարիզ քաղաքի արծաթե մրցանակի (1955), Պալե Ռոյալ (Փարիզ, 1957), «Արվեստները Եվրոպայում» ցուցահանդեսի մրցանակի (Բրյուսել, 1964), գծանկարի` Եվրոպայի առաջին մրցանակի (Մոնակո, 1966), Մարտիրոս Սարյանի անվան Հայաստանի նկարիչների միության մրցանակի (Երեւան, 1987):

«Ռիշար (Խաչատուր) Ժերանյանը հայազգի այն նշանավոր արվեստագետներից է, ում կարելի է համարել Հայաստան-սփյուռք մշակութային կամրջի նվիրյալ կերտողներից: Ժերանյանի կտավների թեմատիկ, ժանրային, ոճական ընդգրկումը չափազանց լայն ու բազմազան է: Նրա` ինչպես գեղանկարչական, այնպես էլ գրաֆիկական ստեղծագործություններն արտահայտչական առումով վերին աստիճանի հագեցած են: Արվեստագետն ասես թափանցում է առարկաների, միջավայրի, զգացողությունների խորքը, մակերեսի միջոցով թափանցում էության մեջ», այսպես նկարչին բնորոշել է արվեստաբան **Լիլիթ Սարգսյանը**:

«**Ազգը**» շնորհավորեց 9 տասնամյակը բոլորած արվեստագետին ու փորձեց տեղեկանալ, թե ինչ տպավորություններ ստացավ մայր հայրենիքից եւ այստեղ հինգերորդ անգամ կազմակերպվող իր անհատական ցուցահանդեսից: «Ես 1964-ին, 69-ին, 75-ին, 79-ին իմ աշխատանքները ցուցադրել եմ Հայաստանում, իսկ այս ցուցահանդեսը կարծես մի տեսակ առանձնացավ, գուցե պատճառն այն էր, որ 30 տարի Հայաստան չեմ եկել: Շատ զարմացա, երբ այսքան լավ փոփոխություններ տեսա, նոր շենքեր, նոր փողոցներ: Շատ դժվար է. երկու կողմերից թուրքն է, մյուս կողմից` վրացին, ուստի շատ դժվար է առանց ճամփաների երկիրը զարգացնել: Եվ այդ ամենը գիտակցելով, ուրախ եմ, որ մեր երկիրը զարգանում է: Միայն տխուր եմ, որ Անիի մայր տաճարը վերանորոգելու են թուրքերը, այլ ոչ թե հայ մասնագետների հետ, որը կլիներ ճիշտ լուծում: Մի բան ասեմ, թուրքական նկարչություն որպես այդպիսին չկա: Անցած տարի Ֆրանսիայում «Թուրքիայի օրեր» միջոցառմանը ներկայացրել էին եվրոպական նկարչության ինչ-որ պատճեններ: Թուրքական նկարչություն չկա, ես իմ աչքով տեսա ու համոզվեցի: 1914-ին թուրքերը պատիվ չէին համարում արվեստագետ լինել ու պնդում էին, որ թուրքը միայն զինվոր պիտի լինի, իսկ հիմա դարձան արվեստագե՞տ: Այդպես չի լինում»:

Պրն Ժերանյանը Հայաստան է ժամանել իր երեք դուստրերի` Բետսիի, Սիլվայի, Մարի-Ֆլոյի եւ փեսայի հետ: Նկարիչը բարձր է գնահատում հայ նկարիչներին` Սարյան, Քոչար, Մինաս..., որոնք հայկական յուրօրինակ արտահայտչամիջոց ունեն ու ոչ մի այլ ազգի հետ չես շփոթի, որ երկրում էլ որ ցուցադրվեն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ



*«Վենետիկուհին», Բելգիական կոլեկցիայից, 1985թ.:*

## Հեռավոր ժամանակների արձագանքը` ժայռապատկերներ

Երեւանի Պետական համալսարանի հրատարակչությունը պետպատվերի շրջանակներում տպագրել եւ ընթերցողի սեղանին է դրել բազմավաստակ հնագետ Սանդրո Սարդարյանի «Ժայռապատկերներ» գիրքը (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որը ընդգրկում է հեռավոր ժամանակների արվեստի նմուշներ` նեոլիթից բրոնզի դարը ներառյալ, մի քանիսը հայտնաբերված Արագած լեռան քարայրներում (պաղաներ), հիմնական մասը` Գեղամա լեռան լանջերից:

Հրատարակվելով հեղինակի մահից 15 տարի անց, գիրքն ամբողջացրեց գիտնականի` Հայաստանի հնագույն պատմությանը նվիրված մենագրությունների շարքը («Палеолит в Армении», «Նախնադարյան հասարակությունը Հայաստանում», «Древнейшая история и культура Армении», «Հայաստանը քաղաքակրթության օրրան»):

Հայաստանի հնագույն պատմության բացահայտման բնագավառում Սանդրո Սարդարյանի ծառայությունները դժվար է գերագնահատել: 1944 թվականից սկսած Արագածի տարածքի մանրակրկիտ հետազոտություններից հետո գիտնականն Արտին լեռան լանջերին գտավ նախամարդու 12 կայան-արհեստանոց, փաստորեն հայտնաբերվեց եւ լուսաբանվեց մարդկային պատմության ամենահին եւ ամենաերկարատեւ ժամանակաշրջանը: Պարզ դարձավ, որ նախամարդը Հայաստանի տարածքում ապրել է միլիոնավոր տարիներ առաջ, ձեւավորվել է, անցել զարգացման բոլոր փուլերը, ընդ որում` անընդմեջ:

Այսպիսով, գիտության մեջ շրջանառվեց Հայաստանում մարդու ծագման ու անընդմեջ զարգացման իրողությունը:

«Պալեոլիթը Հայաստանում» գիրքը թարգմանվեց ֆրանսերեն: Ֆրանսիայի Ակադեմիան Էռնեստ Դիեզի գլխավորությամբ գիտական արշավախումբ կազմեց, որի պեղումները հաստատեցին Սարդարյանի հնագիտական հայտնագործությունների արդյունքները: Հայկական Տավրոսի եւ Զագրոսի լեռնաշղթաների միջեւ, Շանիդար կոչվող քարայրում, պալեոլիթի երեք շերտերից բացի հայտնաբերվեցին մինչեւ 17-րդ դարը ձգվող մարդու բնակության շարունակական հետքեր:

Ս. Սարդարյանի հաջորդ` «Նախնադարյան հասարակությունը Հայաստանում» գրքին անդրադարձավ բրիտանական հնագիտական մամուլը` թարգմանաբար հրատարակելով որոշ գլուխներ:

Առաջավոր Ասիայի տարածքում արդյունաշատ պեղումներ իրականացրած ականավոր հնագետ Չարլզ Բարնեյն իր բնորոշմամբ «շնորհակալությամբ օգտագործելով Ս. Սարդարյանի պեղումների արդյունքները» հրատարակեց «Արարատը եւ Կովկասը. բլուր-բնակատեղիների բնակիչները» աշխատությունը:

Հայաստանի պալեոլիթի ուսումնասիրությունները դասվեցին խորհրդային հնագիտության կարեւոր նվաճումների շարքում: Հայաստանի պալեոլիթով էին սկսվում «Очерки истории СССР», «История СССР», «Всемирная история» ժողովածուները, ակադեմիկոս Պ. Եֆիմենկոյի «Первобытное общество» մենագրությունը:




1958 թվականից սկսած ողջ 25 տարի, Ս. Սարդարյանը պեղել է մ.թ.ա IV-II հազարամյակներին պատկանող Երեւանի մասը կազմող Շենգավիթի հնագույն բնակատեղին, հայտնաբերել է այդ ժամանակի համար բացառիկ հնագիտական մասունքներ, որոնք զարդարում են Հայաստանի Պատմության պետական եւ Շենգավիթի թանգարանները: Այդ ժամանակից ի վեր, Շենգավիթի բնակավայրը մասնագետների շրջանում համաշխարհային հռչակ է ձեռք բերել:



Արագածի եւ Գեղամա լեռների լանջերին սփռված ժայռապատկերների ուսումնասիրությամբ Սարդարյանը զբաղվել է 1945-1961 եւ 1963-1982 թվականներին` Երեւանի պետական համալսարանում հնագիտություն դասավանդելուն եւ Շենգավիթից զատ մի շարք հնավայրերի (Կղզյակ-բլուր, Շրեշ-բլուր, Աղվեսի բներ) պեղումներին զուգընթաց:

Հայտնաբերված որոշ ժայռապատկերներ տպագրվել են հեղինակի աշխատություններում, իսկ «Ժայռապատկերներ» գիրքը ամփոփում է 205 նմուշ:

Երկրագնդի տարբեր մասերում սփռված ժայռապատկերները որպես տվյալ ժամանակաշրջանի մարդու նյութական եւ հոգեւոր կյանքի արտացոլում, կարեւոր պատմական սկզբնաղբյուրներ են, քանի որ հարուստ նյութ են տալիս վաղնջական ժամանակների կենցաղը, պաշտամունքը, սովորույթներն ու արվեստը ուսումնասիրելիս: Սկիզբ առնելով հին քարի դարից, ընդգրկելով հազարամյակներ, տարբեր երկրներում ժայռապատկերներն ունեն կատարման տարբեր տեխնիկա` բազմագույն հանքային ներկերով նկարված են քարանձավների պատերին, ուրվագծային պատկերներ են, հարթաքանդակներ: Հայաստանում դրանք փորագրված են բազալտին:

«Նախնադարյան մարդու կյանքի պատմությունը լուսաբանելու համար ժայռապատկերները պակաս կարեւոր չեն, քան Եվրոպայի քարի դարի քարայրային պատկերները», գրում է գրքի հեղինակը:

Հայաստանի առավել հնագույն ժայռապատկերները պատկերում են այծյամներ, մուֆլոններ, եղջերուներ, շներ, ձիեր, գոմեշներ, գիշատիչներ: Ավելի ուշ շրջանի ժայռապատկերներում նետ-աղեղով, տեգերով զինված որսորդներ են, կանայք, թռչուններ, տարբեր տիպի սայլեր, ծածկասայլեր:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում արորով վար անող մարդու պատկերը` նստակյաց հողագործության անցնելու վկայությունը:

Հեղինակը կասկած չունի, որ Արագածի, Գեղամա լեռների քարքարոտ լեռնային հովիտներում հազարավոր ժայռապատկերների խոսուն պատկերասրահում շատ են ծիսական նշանակություն ունեցողները. միմյանց հետեւից շարված եղջերուների, այծերի, ձիերի, թռչունների նմանօրինակ պատկերներ փորագրված են նաեւ Շենգավիթում հայտնաբերված III հազ. մ.թ.ա ամանեղենի վրա:

Ընդհանրապես հնագույն մարդիկ դրսեւորել են զարմանալի հմտություն` իրենց պատկերած անձանց ու կենդանիներին հաղորդելով շարժում եւ լարվածություն:

Կարեւոր է գրքի եզրահանգումը: Հեղինակը տարանջատել է նախնադարյան հասարակության ժամանակաշրջանի պատկերներն ըստ բովանդակության ու ոճական առանձնահատկությունների:

Առայժմ Հայաստանում գտնված ամենահին նմուշը Ջերմուկի փղի պատկերն է: Միագիծ ժայռապատկերները (այծեր, նետ-աղեղով զինված մարդիկ առանց շան ուղեկցության) պատկանում են մեզոլիթին:

Խորաքանդակ գծային ժայռապատկերները (բազմաֆիգուր սյուժետային նկարներ, կենդանիներ, նետ-աղեղով զինված որսորդներ շան ուղեկցությամբ, հողագործության եւ անասնապահության մեջ կիրառվող քաշող կենդանիներ)` էնեոլիթ-պղնձի դարին:

Ժայռապատկերների փոքրաթիվ խումբը (գերազանցապես Սյունիքի նյութերը) վերագրվում են մ.թ.ա. II-I հազարամյակին:

Արագածի, Սյունիքի, Գեղամա լեռների ժայռապատկերները հեղինակն իրավամբ համարում է Հայաստանի հնագույն մարդու արվեստի հետաքրքրական դսեւորումներ:

Ժայռապատկերների առանձին նմուշներ Հայաստանում հայտնաբերվել են ավելի քան 100 տարի առաջ, տարբեր ժամանակներում ուսումնասիրվել են հնագետների, այդ թվում տողերիս հեղինակի կողմից, գրվել են գիտական աշխատություններ: Առաջիկայում եւս, կարծում ենք, նոր անդրադարձներ կլինեն Հայաստանի ժայռապատկերներին:

Ս. Սարդարյանի հետեւողությամբ շարունակվում են ժայռապատկերների նոր հայտնաբերումները եւ գիտական մանրակրկիտ ուսումնասիրությունները:

ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

# Հանդբոլիստները վիճարկեցին եզրափակիչի ուղեգրերը



Վանաձորում վերջնագիծը հատեց հանդբոլի մինչեւ 14 տարեկան աղջիկների եւ պատանիների առաջնության նախնական փուլը, որում խաղարկվում էին եզրափակիչի ուղեգրերը:

Ինչպես տեղեկացանք հանդբոլի հանրապետական ֆեդերացիայի մամուլի քարտուղարությունից, աղջիկների մրցաշարին մասնակցեցին 6 թիմեր: Մրցաշարում բոլորից հաջող հանդես եկան Շենգավիթի մարզադպրոցի մարզուհիները, որոնց առավելությունը մրցակիցների նկատմամբ ակնհայտ էր: Շենգավիթցիները հաջորդաբար պարտության մատնեցին Հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի (ՀՄԴ) 2-րդ թիմին (16-2), Կոտայքի (14-9), Աջափնյակի (11-2), Ստեփանավանի (15-6) եւ Նոր Նորքի (13-2) թիմերին: Շենգավիթի թիմը 10 միավորով դարձավ մրցաշարի հաղթող եւ իրավունք ստացավ մասնակցելու հանրապետության առաջնության եզրափակիչ փուլին, որը նախատեսվում է անցկացնել նոյեմբերի 3-6-ը Ստեփանակերտում:

Մյուս 2 ուղեգրերը բաժին հասան Կոտայքի եւ Ստեփանավանի թիմերին: Հատկապես ուշագրավ է Կոտայքի թիմի հաջողությունը, որն ընդամենը 6 ամիս առաջ է հիմնադրվել, սակայն փորձառու մասնագետ Ալեքսան Արեւշատյանի շնորհիվ արդեն բավական մարտունակ կոլեկտիվ է դարձել: Եվ դա կոտայքցիներն ապացուցեցին մրցաշարում անցկացրած հանդիպումներում: Թիմը միայն մեկ պարտություն կրեց՝ զիջելով շենգավիթցիներին: Մյուս 4 հանդիպումներում կոտայքցիները հաղթեցին ՀՄԴ-2-ին (10-2), Աջափնյակին (11-3), Ստեփանավանին (5-3) եւ Նոր Նորքին (11-2):

Ստեփանավանի թիմի աղջիկները եւս իրենց վատ չդրսեւորեցին՝ 5 միավորով զբաղեցնելով 3-րդ տեղը, ինչը նրանց ուղեգրի արժանացրեց:

Նշենք, որ եզրափակիչի ուղեգիր նվաճած նշված երեք թիմերին կմիանան նախորդ առաջնության 3 լավագույն ակումբները՝ Արցախի, Վանաձորի եւ ՀՄԴ-ի թիմերը:

Պատանիների մրցաշարին մասնակցեցին 10 թիմեր, որոնք բաժանվել էին 2 ենթախմբի: Առաջին ենթախմբում ուժեղագույնը Վանաձորի 1-ին թիմն էր, որը պարտության մատնեց բոլոր մրցակիցներին (Գեղարքունիք՝ 14-5, Վանաձոր-2՝ 15-7, ՀՄԴ-2՝ 25-19, Կոտայք՝ 18-3): 2-րդ տեղը գրավեցին ՀՄԴ-2-ի պատանիները, որոնք հաղթանակներ տարան Գեղարքունիքի՝ 22-19, Վանաձոր-2-ի՝ 33-13 եւ Կոտայքի՝ 19-10 նկատմամբ:

2-րդ ենթախմբում լավագույնն Աջափնյակի թիմն էր, որը հաղթեց իր բոլոր մրցակիցներին (Շենգավիթ՝ 37-15, Կալինինո՝ 26-7, Դիլիջան՝ 31-1, Ստեփանավան՝ 32-9): 2-րդ տեղը գրավեց Շենգավիթի թիմը: Մրցաշարի հաղթողը որոշվեց ենթախմբերում առաջին տեղը գրաված թիմերի մրցավեճում: Վճռորոշ հանդիպումն անցավ բավական համառ մրցակցությունում: Առաջին խաղակեսում առավելությունը վանաձորցիների կողմն էր, իսկ ընդմիջումից հետո աջափնյակցիներին հաջողվեց տիրել նախաձեռնությանը եւ հավասարեցնել հաշիվը: Հաղթողին որոշելու համար նշանակվեց լրացուցիչ ժամանակ: Մեկ գնդակի առավելությամբ (26-25) խաղը շահեց Աջափնյակի թիմը:

Եզրափակիչ հանդիպման մասնակիցների հետ հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին նաեւ ՀՄԴ-2-ի հանդբոլիստները: Ուղեգրի համար պայքարում նրանք 21-17 հաշվով հաղթեցին Շենգավիթի թիմին: Նշված 3 թիմերը ՀՄԴ-1, Ալավերդու եւ Արցախի թիմերի հետ հոկտեմբերի 18-23-ը կայանալիք եզրափակիչ փուլում կվիճարկեն հանրապետության մինչեւ 14 տարեկան պատանիների չեմպիոնի տիտղոսը:

Մրցաշարի լավագույն խաղացող ճանաչվեց Բագրատ Իսոյանը (ՀՄԴ-2): Մրցաշարի հայտնությունը Գեղարքունիքի թիմի խաղացող Հայկ Մարգարյանն էր, իսկ հեռանկարային հանդբոլիստի մրցանակը հանձնվեց կոտայքցի Վարդան Բակլաջյանին:

# ՖԻՖԱ-ն կքննարկի կոռուպցիայի մասին ներկայացվելիք փաստերը

ՖԻՖԱ-ում կոռուպցիոն նոր սկանդալ է հասունանում: Բրիտանական Sunday Times շաբաթաթերթի վկայությամբ ՖԻՖԱ-ի գործկոմի երկու անդամներ՝ Իսա Խայաթուն եւ Ժակ Անուման 1,5 մլն դոլար են ստացել իրենց ձայնը Քաթարին տալու համար: Ինչպես հայտնի է, Քաթարը հաղթող ճանաչվեց ֆուտբոլի 2022-ի աշխարհի առաջնության կազմակերպիչ երկրի ընտրություններում՝ գերազանցելով ԱՄՆ-ին, Ավստրալիային, Հարավային Կորեային եւ Ճապոնիային: Շաբաթաթերթի ղեկավարությունը խոստացել է շուտով իր ներկայացուցչին ուղարկել Ցյուրիխ եւ ներկայացնել ասվածի ապացույցները:

Այս առնչությամբ ՖԻՖԱ-ի նախագահ Յոզեֆ Բլատերը նշել է, որ միայն շաբաթաթերթի ներկայացուցչի հետ խոսելուց եւ փաստերին ծանոթանալուց հետո հետաքննություն կանցկացնեն: Նա նույնիսկ չի բացառել 2022-ի աշխարհի առաջնության կազմակերպիչ երկրի նոր ընտրությունների անցկացման հնարավորությունը, սակայն նշել է, որ ամեն ինչ քայլ առ քայլ պետք է իրականացնել:

Ավելի վաղ կոռուպցիայի մասին նշել էր Newsweek-ի առաջատար քաղաքական մեկնաբան Ջոնաթան Էլստեր: Ըստ նրա, ՖԻՖԱ-ի գործկոմի անդամները Քաթարից 10 մլն դոլար են ստացել իրենց օգտին տված ձայների դիմաց:

Նշենք, որ կոռուպցիայի վերաբերյալ առաջին հրապարակումները եղել էին դեռեւս 2010-ի հոկտեմբերին The Sunday Times թերթում, մինչեւ աշխարհի առաջնության կազմակերպիչ երկրի ընտրությունները: Խոսքը վերաբերում էր նիգերիացի Էյմոս Ադամուին եւ Օվկեանիայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի նախագահ Ռեյնալդ Տեմարիին, որոնք համաձայնվել էին կլորիկ գումարի դիմաց իրենց ձայները վաճառել: Երկու չինովնիկներին էլ հեռացրին իրենց պաշտոններից: ՖԻՖԱ-ն հայտնվեց քննադատության թիրախի տակ: Կասկածներն ու մեղադրանքներն ավելացան, երբ ընտրություններում հաղթող դարձան Ռուսաստանն ու Քաթարը: Շվեյցարիայի իշխանությունները նույնիսկ հայտարարեցին, որ պատրաստվում են հետաքննել իրենց տարածքում գործող մարզական կառույցների՝ ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՄՕԿ-ի գործունեությունը:

# Մոուրինյուն կփոխարինի՞ Ֆերգյուսոնին

Ըստ բրիտանական The Sun-ի, Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն հաջորդ մրցաշրջանի ավարտից հետո կհեռանա Իսպանիայից եւ կստանձնի անգլիական «Մանչեսթր Յունայթեդի» ղեկը: Ըստ թերթի, գրեթե 25 տարի անգլիական թիմը գլխավորող 69-ամյա Ալեքս Ֆերգյուսոնը 2012-ի ամռանն ավարտելու է մարզչական իր հարուստ կարիերան:



Շոտլանդացի մարզիչը եւս չի բացառել նման տարբերակը. «Ժոզեն իմ լավ բարեկամն է: Մենք հաճախ ենք զրուցել նրա ապագայի շուրջը ու լավ հասկանում եմ Անգլիա վերադառնալու Մոուրինյուի ցանկությունը: Սակայն դժվարանում եմ ասել, թե երբ կազատվի իմ տեղը: Դա կախված է իմ առողջական վիճակից»:

Ժոզե Մոուրինյուն ավելի վաղ The Sun-ին տված հարցազրույցում նշել էր, որ «Ռեալից» հեռանալուց հետո մտադիր է աշխատանքի անցնել անգլիական ակումբներից մեկում: Հարկ է հիշեցնել, որ Մոուրինյուն ժամանակին նաեւ նշել էր, որ կցանկանար աշխատել «Չելսիում»:

## ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Գենադի Մարտիրոսյանը կվիճարկի աշխարհի չեմպիոնի տիտղոսը

**WBO-ի վարկածով միջինքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն, ռուսաստանցի Դմիտրի Պիրոգը հայտարարել է, որ իր տիտղոսի պարտադիր պաշտպանությունն իրականացնելու է Գենադի Մարտիրոսյանի հետ մենամարտում: Նա նշել է, որ կա մենամարտի անցկացման երկու տարբերակ: Առաջինը մենամարտն ԱՄՆ-ում անցկացնելն է, որը կցուցադրվի ESPN հեռուստաալիքով: Ֆինանսական առումով այս տարբերակը ձեռնտու չէ, թեեւ հնարավորություն կտա բռնցքամարտիկներին իրենց հնարավորությունները դրսեւորել ամերիկյան հանդիսատեսի առջեւ:**

**Երկրորդ տարբերակը մենամարտը Ռուսաստանում անցկացնելն է: Դա ֆինանսապես ավելի ձեռնտու է, սակայն այդ դեպքում մենամարտն ԱՄՆ-ում չի ցուցադրվի: Թե որ տարբերակը կընտրվի, կախված է նաեւ Գենադի Մարտիրոսյանից: Վերջինս ծնվել է Երեւանում, ներկայումս բնակվում է Սանկտ Պետերբուրգում: 31-ամյա պրոֆեսիոնալ բռնցքամարտիկը 24 մենամարտերից 22-ում հաղթել է, 2-ում՝ պարտվել:**



**Դմիտրի Պիրոգը եւս 31 տարեկան է, բնակվում է Գելենջիկում: Նա պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է՝ հաղթող ճանաչվելով անցկացրած բոլոր 18 մենամարտերում:**

# «Գանձասարը» սպառնում է դուրս գալ առաջնությունից

**Կապանում սեփական հարկի տակ կայանալիք առաջիկա 5 հանդիպումներն առանց հանդիսականների անցկացնելու ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի մայիսի 19-ին կայացրած որոշումը ստիպել է «Գանձասարի» ղեկավարությանը դիմել ծայրահեղ քայլի: Armsport.am-ի տեղեկացմամբ «Գանձասարի» հովանավոր Մաքսիմ Հակոբյանը որոշել է թիմը հանել առաջնությունից: Այնպես որ առայժմ խիստ հարցականի տակ է վաղն Իջեւանում նշանակված «Շիրակ»-«Գանձասար» խաղի ճակատագիրը:**

**Շատ ցավալի կլինի, եթե «Գանձասարն» իրոք դուրս գա առաջնությունից: Առանց այն էլ ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի մրցաշարում ընդամենը 8 թիմ է հանդես գալիս ու յուրաքանչյուր մրցաշրջանի մեկնարկից առաջ մտավախություն կա, որ որեւէ թիմ կարող է հրաժարվել առաջնությունից, ինչպես դա տեղի ունեցավ «Կիլիկիայի» հետ: Այնպես որ հարկավոր է վերանայել կարգապահական կոմիտեի որոշումն ու ավելի մեղմ պատժամիջոց կիրառել «Գանձասարի» նկատմամբ, մանավանդ որ մրցավարական կոմիտեն իր որոշումներում արձանագրել է մրցավարների թույլ տված սխալները, որոնք ազդել են հանդիպման արդյունքի վրա:**

# Լավագույնը Լիլիթ Մկրտչյանի արդյունքն է

Շախմատի Եվրոպայի կանանց առաջնության ավարտից հետո մրցաշարի մասնակիցների մի մասը Թբիլիսիից ուղեւորվեց Քութայիս, որտեղ երեկ մեկնարկեց արագ շախմատի Եվրոպայի առաջնությունը: Այն նվիրված է Քութայիսում ծնված աշխարհի նախկին չեմպիոնուհի Մայա Չիբուրդանիձեին, որն այս տարի նշեց իր հիսնամյա հոբելյանը:

74 մասնակիցների թվում են Հայաստանի 4 ներկայացուցիչներ՝ Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, Նելլի Աղինյանն ու Մարիա Գեւորգյանը, որոնք հանդես էին եկել Թբիլիսիում: Մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունեն Նադեժդա (2567) եւ Տատյանա (2559) Կոսինցեւա քույրերը: Լիլիթ Մկրտչյանն իր վարկանիշով (2468) 8-րդն է: Մրցաշարը կավարտվի այսօր: Ավարտական՝ 11-րդ տուրի հանդիպումները կսկսվեն ժամը 18.30-ին: Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 9450 եվրո է: Հաղթողը կպարգեւատրվի 2000 եվրոյով, 2-րդ մրցանակակիրը կստանա 1500 եվրո, 3-րդը՝ 1000: Ընդհանուր առմամբ գումարը կբաշխվի 20 լավագույն շախմատիստուհիների միջեւ:

Հայ շախմատիստուհիներից բոլորից հաջող մեկնարկեց Նելլի Աղինյանը՝ հաղթելով վրացուհիներ Մարիամ Ցուլայային եւ Լելա Ջավախաշվիլուն: Լիլիթ Գալոյանը մեկնարկային 2 հանդիպումներում վաստակեց 1,5 միավոր՝ հաղթելով Նինո Իմնաձեին եւ Ալեքսանդրա Գորյաչկինային: Լիլիթ Մկրտչյանը հաղթանակով սկսեց մրցաշարը՝ պարտության մատնելով Ռատման Ռիզամաձեին: Իսկ ահա հաջորդ տուրում նա պարտություն կրեց Չեխիան ներկայացնող Կատերինա Նեմցովայից:

Մարիա Գեւորգյանի համար մեկնարկն անհաջող էր: Նա պարտվեց շվեդուհի Պիա Կրամլինգին: 2-րդ տուրում Մարիան հաղթեց Քեթեւան Խոմերիկիին:

Որոշ հանգստից հետո մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջը՝ անցկացնելով եւս 3 պարտիա: Դրանք անհաջող էին Նելլի Աղինյանի համար, որը պարտություններ կրեց Տրանգ Հոանգի, Իննա Գապոնենկոյի եւ Տեկլա Պարջիանիի հետ պարտիաներում: Ավելի հաջող խաղաց Լիլիթ Մկրտչյանը՝ վաստակելով 2,5 միավոր: Նա հաղթեց Սաբինա Իբրահիմովային եւ Դեյմանտե Դաուլիտեին, ոչ-ոքի խաղաց Միրանդա Միկաձեի հետ: 5 տուրից հետո Լիլիթ Մկրտչյանը վաստակել է 3,5 միավոր: 2,5 միավոր ունի Լիլիթ Գալոյանը, որը հաղթելով Ելենա Սեմյոնովային, հաջորդ երկու պարտիաներում պարտվեց Մայա Լոմինեյշվիլուն եւ Սանդուգաշ Շայդուլինային: Նելլի Աղինյանն ու Մարիա Գեւորգյանն ունեն 2-ական միավոր:

5 միավորով մրցաշարի առաջատարն է Հունգարիան ներկայացնող գրոսմայստեր Տրանգ Հոանգը: 4,5-ական միավորով նրան հետապնդում են Նադեժդա Կոսինցեւան եւ Ինգա Չարխալաշվիլին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Տնտեսական ակտիվության 7,7 տոկոս աճ

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, հրապարակված 2011-ի ապրիլ ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա ապրիլի համեմատ գրանցել է 7,7 տոկոս աճ: Հիշեցնենք, որ այս տարվա մարտի ՏԱՑ ցուցանիշը նախորդ տարվա մարտի համեմատ գրեթե զրոյական աճ էր արձանագրել: Միեւնույն ժամանակ, այս տարվա մարտի համեմատ ապրիլին աճը կազմել է 4 տոկոս:

Հիշեցնենք, որ սկսած այս տարվանից, վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը:

Նախորդ տարվա ապրիլի համեմատ աճ են արձանագրել մեր տնտեսության բոլոր ճյուղերը, բայց տարբեր չափով: Մասնավորապես արդյունաբերությունն ունեցել է ամենամեծ աճը՝ 2010-ի ապրիլի նկատմամբ՝ 11 տոկոս, բայց այս տարվա մարտի նկատմամբ արձանագրել է 1,5 տոկոս անկում: Շինարարությունը մայիսին արձանագրել է 16,9 տոկոս աճ, բայց մարտի նկատմամբ՝ 1,2 տոկոս անկում: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը ապրիլին աճել է 0,6 տոկոսով, իսկ մարտի նկատմամբ՝ 42 տոկոսով:

Մանրածախ առեւտրում արձանագրվել է 0,2 տոկոս աճ անցյալ տարվա ապրիլի համեմատ, իսկ այս տարվա մարտի նկատմամբ՝ 1 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա ապրիլի նկատմամբ աճը կազմել է 9,3 տոկոս, իսկ այս տարվա մարտի նկատմամբ՝ 4,5 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 4,7 տոկոսով, իսկ մարտի նկատմամբ նվազել 3,1 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2011-ի ապրիլին 2010-ի ապրիլի նկատմամբ ավելացել է 19,1 տոկոսով եւ կազմել 449 մլն դոլար: Արտահանումը կազմել է գրեթե 111 մլն դոլար, արձանագրելով 21 տոկոս աճ, իսկ ապրիլին մարտի նկատմամբ՝ 13,5 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 338 մլն դոլար, նախորդ տարվա ապրիլի համեմատ աճելով 16,6 տոկոսով, իսկ այս տարվա մարտի համեմատ՝ գրեթե մնալով անփոփոխ: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը փոքր-ինչ բարելավվել է, կազմելով 227 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում մարտին կազմել է գրեթե 110 հազար դրամ, մասնավոր հատվածում՝ 135 հազար դրամ, պետականում՝ 89 հազար դրամ:

Այսպիսով՝ տնտեսական ակտիվության աճը ապրիլի արդյունքներով վերականգնվեց եւ հավանաբար առաջիկա երկու-երեք ամիսներին կմնա որոշակի բարձրության վրա, քանի որ դրանք տարվա տնտեսապես ակտիվ շրջան են համարվում: Տնտեսական ակտիվությունը սովորաբար բարձրանում է նաեւ տարեվերջին՝ սեպտեմբերից:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար տպագրության աշխատանքների իրականացման համար հայտարարված պարզեցված ընթացակարգով մրցույթի հրավերի փաթեթում կատարվել է փոփոխություն:

Լրացուցիչ ինֆորմացիա կարող եք ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am պաշտոնական կայքից և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ 58-07-80 հեռախոսահամարով:




# Անիտա Կարագոզյան. ծովագնաց, օվկիանոսագետ

*2-րդ էջից*

**Ցավն ու հիասթափությունը տանջում են սիրտս ու հոգիս: Ինչպե՞ս կարելի էր մինչեւ հիմա չունենալ նրա գրքերը, նկարները, ակնարկները, դիմանկարները: Չէ՞ որ նա՝ Անիտա Կարագոզյանը իր կամքով չէր հայտնվել օտարության մեջ: Եվ ոչ միայն նա: Օլերոն կղզում, թե Կիպրոսում, Նոր Զելանդիայում, թե Բալիում, շատ կղզիներում եւ մայրցամաքներում նրանք հազարավորներ էին: Չլիներ մեր ազգային ողբերգությունը, կծնվեին հարազատ հողում, եւ միեւնույնն է, ի հայս կգար նրանց տաղանդը, աստվածատուր շնորհը: Ընդամենը մեկ օրինակ բերեմ: Ես իհարկե, կարող էի կանգ չառնել հոգուս թանկ Անիտայի կերպարի վրա հենց թեկուզ այն պատճառով, որ նա, բացի ամենայնից, պարզապես համաշխարհային չափանիշի ականավոր ծովագնաց է: Հղում կատարելով «Ամարաս»-ի «Հայուհիներ» հանրագիտարանի էջերին, բերեմ նրա կենսագրության եւ աշխարհագրության միայն մի քանի փաստեր, որոնք նրա գործունեությունը նկարագրող ահռելի նյութի միայն վերնագրերը կարող եք համարել: Դեռեւս երիտասարդ տարիքում «Թեոդոր Տիսսյե» նավով օվկիանոսներում եւ ծովերում հետազոտել եւ որոշել է ձկների վտառների բնական վայրերը եւ գտնվելու խորությունը: Հիմնավորապես հետազոտելով Հյուսիսային Ատլանտիկայի եւ Աֆրիկայի արեւմտյան ափեզերքը, գրել է «Կինը ծովում» եւ «Օվկիանոսների ալիքները» գրքերը: Անիտա Կարագոզյանը հրատարակել է մեծ թվով պրոբլեմային հոդվածներ, պոեմներ, բանաստեղծություններ, փիլիսոփայական էսսեներ, աշխարհի շատ երկրներում ցուցադրության է ներկայացրել իր լուսանկարչական աշխատանքները: Ինքն էր պատկերազարդում իր գրքերը: Աշխարհում ճանաչված ծովագնացը Սեն Ժակ նավահանգստից ոչ հեռու, իր միջոցների հաշվին երիտասարդների համար բացել էր ծովայինների դպրոց: Երկրորդ համաշխարհային պատերազմի ամենասկզբին Պա-դե-Կալե նեղուցում, Բարենցի ծովում (իսկ դա արդեն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսն է) եւ Շպիցբերգենում զբաղվել է ականազերծման հարցերով: Հետպատերազմյան քաղցած տարիներին շատ երկրներ Անիտային հրավիրում էին, ինչպես այն ժամանակ էին ասում՝ գրագետ եւ արդյունավետ ձկնորսություն կազմակերպելու գործում օգնելու: Օվկիանոսագիտությանը նվիրված միջազգային բազմաթիվ գիտաժողովներում քննարկում էին նրա զեկուցումները ու աշխատությունները: Մեծ գիտնական, ծովային եւ օվկիանոսային խորությունների հետազոտող Ժակ-Իվ Կուստոն խոստովանել է, որ առանց Անիտա Կոնտիի պարզապես անհնար կլիներ կազմակերպել ու ստեղծել օվկիանոսագիտության հայտնի թանգարանը Մոնակոյում: Անիտան, լուսանկարչական խցիկը ձեռքին, ճամփորդել է աշխարհով մեկ: Եզակի ալբոմներ է կազմել Շոտլանդիայի, Իսլանդիայի, Գրենլանդիայի մասին:**

**Տիկին Կարագոզյանը մահացավ իննսուն ինը տարեկանում, սեփական տանը, Քրիստոսի Ծննդյան օրը տեղի ունեցած փոթորկի ժամանակ: Այդ մեծ կնոջ մոխիրն, իր կտակի համաձայն, ցրեցին Միջերկրական ծովում: «Հայուհիներ» երկհատորյակի հրատարակիչ Արկադի Ասրյանը տվյալներ է բերում, որ տիկին Անիտայի սեփական արխիվում պահպանվում են քառասուն հազար հազվագյուտ լուսանկարներ, տասնյակ ֆիլմեր, ճամփորդական գրառումների օրագրերի եւ նյութերի կույտեր:**

**Եվ ուրեմն մի՞թե բարոյականության ու պարտքի տրամաբանությունը պարզապես չի պահանջում գոնե հետաքրքրվել, եթե չասենք՝ ծանոթանալ մեր ականավոր հայրենակցուհու ստեղծագործական ժառանգությանը: Բայց չէ՞ որ միայն նա չէ այդպիսին: Ես ծրագրել էի մեկ ռեպորտաժում պատմել մեր միանգամից երկու հայրենակցուհիների մասին: Ձեզ արդեն ծանոթ է Գլեդիս Բերեջիկլյանը, որը ծնվել է Ավստրալիայում եւ, ինչպես արդեն ասել եմ, այդ երկրի առաջին կին նախարարն է: Հաջորդ, հերթական ռեպորտաժում կպատմեմ Գլեդիսի մասին, նրա հետ «Արմենիա»-ի անձնակազմի հանդիպման մասին պատմելենսում: Իսկ առայժմ կասեմ միայն այսքանը. հարցրեք այդ եռանդուն կնոջը, Ավստրալիայի հայտնի պետական գործչին, թե ծնունդով որտեղացի է, եւ ի պատասխան նա չի ասի, թե ինքն անձամբ Ավստրալիայում է ծնվել, չի ասի, որ իր հայր Գրիգորը ծնվել է Հալեպում, իսկ մայրը՝ Արշալույսը՝ Երուսաղեմում, այլ կկսի նրանից, որ իր նախնիներն Ադանայից են, Խարբերդից, Այնթափից ու Բերեջիկից: Դա նրա համար վաղուց սկզբունք է:**

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**Սիդնեյ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգչային տեխնիկա, հարակից սարքավորումներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու նպատակով համակարգչային տեխնիկա, հարակից սարքավորումներ ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2011թ. հունիսի 30-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2011թ. հունիսի 30-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2011թ. հուլիսի 07-ին ժամը 16-00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am):

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդհանուր օգտագործման Oracle Database Enterprise Edition NUP (Named User Plus; Perpetual, with First Year Support) ծրագրային ապահովման 140 արտոնագիր ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ընդհանուր օգտագործման Oracle Database Enterprise Edition NUP (Named User Plus; Perpetual, with First Year Support) ծրագրային ապահովման 140 արտոնագիր ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2011թ. հունիսի 30-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2011թ. հունիսի 30-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2011թ. հուլիսի 07-ին ժամը 17-30:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am):

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: